



**ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ՍՐԲԱԼՈՒՑ
ՄԵՌՈՒՄԻ ՕՐՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՆԴԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

ԺԱՄԱՆՈՒՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԵՐԻ

1969 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 14-ը պատմական ու հիշարժան օրեր հանդիսացան մեր ազգային ու եկեղեցական ժամանակակից պատմության մեջ և մի խանդավառ հանգրվաճ՝ Մայր Աթոռ և Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի եկեղեցաշեն, հայրենանվեր գործունեության ճանապարհին՝ ոգևորիչ արդյունքներով:

Մայր Աթոռում եակիսկոպոսական ժողովի գումարումը, սեպտեմբերի 27—հոկտեմբերի 2, որին մասնակցեցին Երուսաղեմի և Թուրքիայի հայոց սրբազն պատրիարքները, 23 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, և որը պատմական կոչվելու սահմանված սրբագումար մի ժողով էր իր ներկայացուցական բնույթով և օրակարգի վրա դրված հարցերի կարևորությամբ: Քույր եկեղեցների բարձրաստիճան ներկայացուցիչների, պատգամավորների և հյուրերի, արտասահմանից ավելի քան մեկ հազար ուստավորների և շուրջ 40 հազար աշխարհական ժողովրդի, 250 ուստավորների ներկայության կատարված սրբալուս մեռնի օրհնությունը հոկտեմբերի 5-ին, մայրավանքի բակում, Մայր տաճարի զանգակատան առաջ, այս Հայոց Հայրապետի ծննդյան 60-ամյակին նվիրված հանդիսավոր հիստը հոկտեմբերի 7-ին, Վեհարանում, հայ մշակույթի տոնին նվիրված հանդիսավոր հոկտեմբերի

12-ին, ովաստագնացությունները, շրջապտույտները անցնելի կերպով դրոշմած կմնան բոլոր ներկաների սրտերում և մեր օրերի տարեգործության մեջ:

Պատգամավորներն ու հյուրերը կտրել-անցել են հազարավոր կիլոմետր ծովեր, օվկիանոսներ՝ գալ հասնելու Մայր Աթոռ և հայրենի սրբազն հողը, համբուրելու և. Էջմիածնի հազարամյա, մեռոնաբույր քարերն ու սրբությունները, Լուսավորչի արժանավոր հաշորդի և. Աջը, որը 14 տարիներ ի վեր կրում է հայրապետական ծանր լուծը՝ իր հոգեստը, ազգային-հայրենասիրական առաքելության խորունկ գիտակցությամբ:

Սեպտեմբերի 24—հոկտեմբերի 4-ը ժամանում են պատգամավորները, ովաստագնություն ու հյուրերը:

Երևանի օդանավակայանում պատշաճ հարգանքով դիմավորվում ևս բոլորը՝ Մայր Աթոռի լուսարարավետ տ. Հայկազոն արքեպ. Աքրահամյանի զիսավորությամբ կազմված ընդունելությանց կենտրոնական հանձնաժողովի, Մայր Աթոռի միարանության կողմից:

ԺԱՄՄԱՆՈՒՄ Կ. ՊՈԼԽԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Սեպտեմբերի 22-ին, երկուշաբթի օրը, ժամանում է Թուլքիայի հայոց ամեն. տ. Շնորհը արքեպ. Գալստյանը՝ ընկերակցությամբ տ. Թադեոս քին. Տերողորմանյանի և տ. Բարթող քին. Բորբաջանի:

Մայր տաճարի շքամուտքի առաջ, եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ով, Նորին ամենապատվությունը առաջնորդվում է Մայր տաճար, որ Խջման և սեղանի առաջ Վեհափառ Հայրապետը, շրջապատված եափսկոպուներով և վարդապետներով, ողջունում է տ. Շնորհը սրբազն պատրիարքի ժամանումը Մայր Աթոռ և. Էջմիածին՝ սրտագին բարիգալայոյան մաղթանքներով:

Ամեն. տ. Շնորհը և պատրիարքը իր շնորհակալությունն ու երախտագիտությունն է հայտնում Հայոց Հայրապետին՝ Մայր Աթոռ և. Էջմիածին գալու հրավերի համար, և իր ուրախությունը, որ Աստոծն օգնականությամբ ժամանել է Մայր Աթոռ՝ մի անգամ ևս և. Էջմիածին տաճարի նվիրական կամարների տակ ողջունելու Հայոց Հայրապետին:

Խջման և. սեղանի առաջ իրենց ովատն ու աղոթքն են կատարում տ. Շնորհը պատրիարքը և շքախմբի անդամները:

ԺԱՄՄԱՆՈՒՄ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Սեպտեմբերի 26-ին, ուրբաթ օրը, գիշերվա ժամը 1-ին, Մայր Աթոռ և ժամանում Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Եղիշե արքեպ. Տերտերյանը՝ ընկերակցությամբ և. Աթոռի լուսարարավետ տ. Հայրիկ արքեպ. Ապանձյանի, դիվանապետ և ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի տեսուչ տ. Շահե եպս. Աճեմյանի և տ. Հակոբ Վարդանյան ու տ. Գարեգին Գաղանձյան եպիսկոպոսների:

Նորին ամենապատվությունը եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ով մուտք է գործում Մայր տաճար, որ Խջման և. սեղանի առաջ Հայոց Հայրապետը սիրով և սրտագին ուրախությամբ ողջունում է Երուսաղեմի սրբազն պատրիարքի և շքախմբի անդամների ժամանումը Մայր Աթոռ:

Տ. Եղիշե սրբազն պատրիարքը իր պատասխան խորքում իր զգացված շնորհակալությունն է հայտնում Հայոց Հայրապետին՝ կրկին անգամ և. Էջ-

միաժին ովասի եկած լինելու համար, մասնակցելու եպիսկոպոսական ժողովին, սրբազնությունն օրինության, Նորին Սրբության ծննդյան 60-ամյակին և այլ հանդիսավորություններին:

Ապա Խջման և սեղանի առաջ իրենց ովասն ու աղոթքն են կատարում Երուսաղեմի ամեն. ո. Եղիշե սրբազն պատրիարքը և շքախմբի անդամ սրբազն հայրերը:

Երուսաղեմի և Կ. Պոլսի սրբազն պատրիարքները իրենց շքախմբերով, բոլոր արքեպիսկոպոսներու ու եպիսկոպոսները հյուրընկալվում են Վեհականություն և Մայր Աթոռում՝ որպես Հայոց Հայրապետի թանկագին հյուրերը:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 27-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է եպիսկոպոսական ժողով, որն իր աշխատանքները շարունակում է մինչև հոկտեմբերի 2-ը (տես «Հջմիածին» ամսագրի սույն համարի էջ 21):

Հոկտեմբերի 3—4-ը Մայր Աթոռ են ժամանում պատգամավորները և հյուրերը, օտար եկեղեցիների ներկայացուցիչները:

Հոկտեմբերի 4-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 17-ին, բոլոր նոգեստ պետերը, պատգամավորներն ու հյուրերը Մայր տաճարում ներկա են լինում կիրականի հանդիսավոր ժամերգության՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

ՄՐԱՎԱՐԻՑՍ ՄԵՌՈՒԴԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 5-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը մեծաշուրջ հանդիսավորությամբ իր գահակալության 14-րդ տարում կատարում է երրորդ անգամ սրբազնությունն օրինությունը, որով մի անգամ ևս փառավորվում է Մայր Աթոռ և Հջմիածինը, պայծառանում է Հայաստանյաց առաքելական եկեղեցին, միտրապետ է համայն ժողովորդը հայց:

Անձրևում է. այնուամենայնիվ ովասավորների, պատգամավորների աշխախախումբ բազմությունը, շուրջ 40.000 հոգի՝ ափյուռքից, Երևանից, Հայաստանի զանազան շրջաններից և հարևան եղբայրական համբաւառություններից եկած, հոգեկան մեծ հրճվաճքով մասնակցում են սրբազնությունն օրինության հանդիսավոր նորությանը, որ կատարվում է բացօթյա, Մայր տաճարի զանգակատան առաջ, հատուկ պատրաստված բեմի վրա:

Արդարն, սրբազնությունն օրինությունը հայ հավատացյալ ժողովորդի սրտի ամենամուտ ազգային-եկեղեցական տոնախմբությունն է, մեր հին նավասարդյան ուրախության օրերը հիշեցնող, որին միշտ ներկու է եղել մեր ժողովորդը հոգեկան ուրախության վառ զգացմունքներով և ազգային հպարտության քաղցր հոգումներով:

Առաջին անգամ Մայր տաճարում, ՅՈՅ թվականին, ս. Գրիգոր Լուսավորիչն է, որ օրինել է սրբազնությունը՝ Տրդատ Գ հայոց արքայի կերանայրությամբ, և ազնութեան, դարերի ընթացքում, Լուսավորչի աղժանակուր հաջորդները միշտ օրինել են սրբազնությունը, որպեսի երբեք հայ նկեղեցում և հայ հոգիների մեջ «չպալիս ձերը մարտը իր կանոթութիւն»:

Եվ ահա այսօր էլ հայ ովասավորը եկել է ս. Հջմիածին, մայր հայունիք

աշխարհի բոլոր ծագերից՝ իր հետ բերելով բյուր կարուտներ, համբույր, երազ
ու պաշտամունք, կրոնաբույր և հայրենասիրական տեհչերով, նույսերով:

Ս. Էջմիածինը բերել է բոլորին իր հովանու ներքո, իր սիրատն գիրկը
մայրական, իր մեռնաբույր օրինությունն ու աղոթքը բաշխելու բովանդակ
հայությանը:

Սրբալոյս մեռնի օրինության պատրաստությունը սկսվել է Մայր Ալեռ-
ուում վաղուց՝ 40 օրեր առաջ: Մեռնի կաթոսան լցված անուշահոտ ծաղկանց
սուրբով, դրվել է Ավագ սեղանի առաջ «աղօթիք և երգօր հոգևորօք» և ծած-
կլված «եօթն շղարշով»:



Եկեղեցական թափորը

Տ. Մակար կաթողիկոսի օրով Մայր Աթոռում տպագրված մեռնի օրի-
նության Մաշտոցը, մեռնի հյութերի թիվը և տեսակը հասցեում է 45-ի (տես
«Կանոն օրինութեան սրբալոյս մեռնին», Վաղարշապատ, 1890, էջ 3):

Առավոտյան ժամը 12-ն է: Երկինքը պայծառանում է, աճարևը՝ դադա-
րում:

Մայր տաճարի գանգերը հնջում են տոնական ու զվարիք:

Ալեկոծվում է մայրավանքի բակում բացօթյա բեմի շուրջ սպասող հա-
վատացալների և ուստավորների բազմությունը:

Կարգապահությանը հսկում են 150 հայ ոստիկաններ իրենց տոնական
համազգեստներով:

Եկեղեցական մեծահանդես թափորը սկիզբ է առնում Վեհարանի մեծ շքամտածքից և ձգվում դեպի Մայր տաճար:

Քահանացապետական լրիվ զգեստավորման մեջ եկեղեցական թափորը գլխավորում է Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված տ. Եղիշե, տ. Շնորհը սրբազն պատրիարքներով, որոնք սովորականութեան և հանդիսավորապես զգեստավորված են, իրենց դիրքի ու պաշտոնի համաձայն, ինչպես և առևտության մեջ մասնակցելու են արքայության 12 արքեպիսկոպոսներով և եպիսկոպոսներով, որոնք մասնակցելու են արքայության մեռնի օրինությանը:

Եկեղեցական թափորին մասնակցում են նաև ողջ եպիսկոպոսական դասը, վարդապետներ, քահանա հայրեր, սարկավագաց խումբը՝ շուրջ 100 հոգի:

Թափորին մասնակցում են նաև հանդիսավորական հրավիրված քույր և կենացիների ներկայացուցիչներ և այլ հոգևորական հյուրեր՝ զգեստավորված, վեհ ու տպավորիչ: Եկեղեցական թափորը ուղղվում է դեպի բեմ: Առջևից ընթանում են կարմրագետս, ջապին երկու շարժիները, արծաթգլուխ գալազաններով: Նրանց հետևում են ջահակիրները: Թափորի կենտրոնում երկու վարդապետներ կրում են խաչվառն ու հայրապետական գավազանը, իսկ երկու սարկավագներ՝ ս. մեռնի կաթոսայի ոսկեթել երիզներով սպիտակաթուր շղարշը: Նրանց հետևում է արքալույս մեռնի օրինության կնքանայր տիար Սարգիս Սարգսյանը՝ ոսկեթել շապիկ հագած:

Այնուհետև թափորին հաջորդում է եկեղեցական դասը և զգեստավորված 12 արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների շքախումբը՝ մասունքներով, սրբազն խուրերով և արծաթապատ Ավետարաններով:

Վեհափառ Հայրապետը գլխավորում է թափորը՝ նոր ամփհովանու ներքո, որը կրում են Պետրոս Ալեքսանը (Անգլիա), Կարո Մարտինը (Հընդկաստան), Պողոս Ներսիսյանը (Բրազիլիա) և Գեղամ Պարսամյանը (Արգենտինա): Խաչով ու գավազանով: Սրբալույս մեռնի օրինության առիթով նոր, ոսկեթել, թափշյա ամպհովանին նվիրել է տիկին Լյուսի Մարտիրոսի Ուզույանը (Իրաք):

S. Եղիշե պատրիարքը կրում է աստվածամուղ ս. Գեղարդը, տ. Շնորհը պատրիարքը՝ ս. Կենաց փայտը, տ. Հայկազոն արքեպիսկոպոսը՝ ս. Լուսավորչի Աջը, տ. Սերովը արքեպիսկոպոսը՝ ս. Արիատակեսի Աջը, տ. Թորգոնի արքեպիսկոպոսը՝ ս. Թաղենոսի Աջը, տ. Բարգեն արքեպիսկոպոսը՝ ս. Հակոբ Մծրան Հայրապետի Աջը, տ. Կոմիտաս եպիսկոպոսը՝ ս. Թովմաս առաքյալի Աջը, տ. Պատկ արքեպիսկոպոսը և տ. Զավեն եպիսկոպոսը՝ ս. Ավետարաններ, տ. Հակոբ եպիսկոպոսը՝ մեռնի մերանը, տ. Տիրայր եպիսկոպոսը՝ բալասանի անոթ-սրբակը, տ. Վաչե եպիսկոպոսը՝ հին մեռնի սրբակը, տ. Գևան և տ. Գարեգին եպիսկոպոսները՝ բուրգառներ:

Վեհարանից մինչև բացօթյա բեմը երկշարք կանգնած բազմությունը հոգեպես վերացած՝ գլուխը խոնարհում է երկրուղածորեն հայրապետական ս. Աշխ առաջ, որը բարձրանում և օրինում է իր ճանապարհի վրա կանգնած ծովածակալ բազմությանը:

«Հրաշափառ Աստուած» շարականի վեհ հնչյունների տակ Տրդատյան դուս միջով եկեղեցական թափորի շքերթը անցնում է, և Վեհափառ Հայրապետը, շրջապատված տ. Եղիշե և տ. Շնորհը սրբազն պատրիարքներով և զգեստավորված եպիսկոպոսներով, բարձրանում է Մայր տաճարի արևելյան մուտքի զանգակատան առաջ շինված բեմ-սեղանի վրա՝ կատարելու սրբալույս մեռնի օրինությունը:

Թնդում է վեհ ու ցնծագին «Ուրախ լեռ» շարականը, որը բերկրանքի,

խնդրության հովզերով է համակում բոլորի սրտերը: Արդարն, այսօր ուրախ է Մայր Աթոռ և Էջմիածինը՝ «Մայր որդուովք բերկրեալ»:

Հույր եկեղեցիների հոգևոր պետերը և ներկայացուցիչները խորը հիմացմունքով ներկա են լինում հոգեպարար հանդիսությանը:

Ամեն կողմ լուս, խուճի ու աղոթք:



Եկեղեցական թափորը քոյր եկեղեցիների ներկայացուցիչներով

Հայոց Հայրապետը բազմում է «յաթոռ և երկոտասան եպիսկոպոսունք կալով շրջապատ առաջի, ուներով ի ձեռս իրենաց զսորք նշանն Կենաց և զնշ Սրբոյ Լուսատորչին և զնշարս սրբոց և մեռօնաշիշ մի լցեալ հին մն ոռնաւ»:

Ակալում է սրբալոյս մեռնի օրինությունը. «Քաջնամ եպիսկոպոսապետն կատարէ զխորհրդածութիւն սրբոյ մեռնին»:

Սրբազն եպիսկոպոսները, «Կանոն օրինութեան սրբալոյս մեռնին» հրահանգի համաձայն և Գրքից կատարում են համապատասխան հատվածների ընթերցումներ, սուրբ յուղի պատրաստության հոգևոր, մաքրազարդող նշանակության և նրա գործածության մասին:

Կենափառ Հայրապետը ընթերցում է մեռնօրիների մեծ աղոթքը «զայոթս խնկարկութեան»:

«Արդ, զօրութեամբ ամենասուրբ Հոգուոյ եղիցի իւս այս՝ իու ցնծութեան, զգեստ լուսաւոր, օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգեց և մարմնոց, շնորհիք հոգևորական, պահապան կենաց, կնիք արդարութեան, զէն մատառ, համատակ յաղթող ընդդիմ ամենայն գործոց բանարկուին. ոգոց

փրկութիւն, ցնծութիւն սրտից, ուրախութիւն յախտենական, զի որ ոք օծի ի սմաճ՝ վերատին ծննդեան իտղվս, երկիտլած լիցի յԱստուծոյ և աներկիտի ի հակառակորդէն:

Եպիսկոպոսական դասը միաբերյան ու ներդաշնակ երգում է «Որ յառաջագոյն լորենս» մեռունօրհնության շարականը և «Մեղեդի մեռոն» Հայր Ամենակալը» և Ծնորհալու գրած «Քաղցր ձայնի» քարոզը՝ «Նոր օրմնութիւն»:

Տ. Եղիշէ և տ. Ծնորհք սրբազն պատրիարքները կարդում են մեռունօրինության երկրորդ և երրորդ մեծ աղոթքները:

Ապա «լինի բացումն դրան հիւթոյ մեռոնի», այսինքն լուսարարապետ որբազանը բացում է մեռոնի կաթոսայի կափարիչը, մինչ դպիրները եղանակում են ոգևորությամբ «Բացեր, Տէ՛ր, այս օր զգանդ երկնային» շարականը:

Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես կաթոսայի մեջ է լցնում «զնիւթ ծաղկանցն և ապա զպալասանն և զկնի զիին մեռոնն ասելով շարական «Առաքելոյ աղաւնոյ»»:

Հին մեռոնն ուկի շիթերը թափվում են նոր մեռոնի մեջ, մինչ «զի լիցի դղրդումն»: Ցնծագին հնչում են զանգերն ավետավոր Մայր տաճարի, և ժողովորդի հոգևոր բերկուանը հասնում է իր լրումին:

Այդ նվիրական պահին Հայոց Հայրապետը Կենաց փայտով, ս. Գեղարդով և ս. Գրիգոր Լուսավորչի Աջով տյառնագրում է և խառնում նոր մեռոնը, երգելով.

«Օրինեսցի և սրբեացի մեռոնն այս հշանաւ»: Թնդում է բոլոր պրտերից և հոգիներից միաբերան և պահատագին «Ամէ՛ն, պեղուիա»-ն:

Նոր մեռոնը տյառնագրվում է նաև միուս մատնեցներով և սրբություններով, ապա կաթոսան նորից ծածկվում է կափարիչով և «Եօթն շղարշով»:

Հանդիսադիր Հայոց Հայրապետը կարդում է վերջին աղոթքը.

«Արդ՝ այժմ և մեր պատրաստելով զայ որպէս կաթօն՝ մատուցածեմք, զի առնենքան որ ի աման առնուցում՝ արժանի լիցին ընդունել զիաստատուն կերակոր, զճմարիտն, զերկնային՝ ի շնորհաց Միածնի քո Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...»:

«Քրիստոս Աստուած մեր՝ պարզնիշ աստուածային օծութեան, սրբեա՛ զմեզ առ ի քէն սրբութեամբն և արա՛ զմեզ հաղորդս պարգևաց Հոգուոյ քո Սրբոյ, որպէս զի կատարեսցի կարգս այս Սրբոյ Մեռոնին, Տէ՛ր մեր և Աստուած մեր յախտեանս...»: «Եւ այժմ ծագեա՛ ի սիրոս մեր զպարգևս բայութեան Հոգուոյ Սրբոյ, և հաղորդակիցս երևեց՛ զմեզ պարզնաց քոց սրբոց, վասնզի Դու իսկ ես Մեռոն ամբիծ, և մաքոր, և անաղարտ, որ հանապազ բուրես յանձինս սրբոց քոց...»:

Հանդիսադիր մասնակից սրբազն եպիսկոպոսներից մեկը ընթիրցում է Մարկոսի Ավետարանից մի էջ «Եվ շրջէր Տէրն մեր Յիսուսի Քրիստոս»:

Սարկավագը բարձրաձայն քարոզում է «Սուրբ խաչիս և Սուրբ մեռոնաւ աղաչեցուր զՏէր»:

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է սրբալուս մեռոնի օրինության սրտառուչ հանդիսադիրունք:

Այժմ քարոզի պահն է: Վեհափառ Հայրապետը խոտում է ներշնչված իր հոգելից քարոզներից մեկը, օրվա հոգեզմայ համեմատյանց և օրինությունների տպավորության ներքո (քարոզը տես «Հշմիածին» ամսագրի առյևն համարի էջ 50):

Հայաստանաց եկեղեցու և ժողովրդի կյանքում սուրբ յուղի կամ մեռոնի օրինությունը, որպէս խորհրդավոր սրբագործություն, քացարիկ արժեք, նո-

գեկոր ճշանակություն, համաժղովրդական խանդավառություն է ստեղծն միշտ:

Այս իսկ պատճառով ի հետոց անտի հայ եկեղեցում սրբարույս մեռունի օրինությունը վերապահված է հայրապետական բարձրագույն իշխանության:

Սրբարույս մեռունի եղել է մեր կրոնական զգացմունքների, ազգային գիտակցության և մեր ժողովրդի հոգևոր միասնականության խորհրդանշանը, ոգեկան շաղախը, որով հայ եկեղեցու զավակմերը դրոշմվում են և շաղկապատմ միմյանց հետ՝ դառնալով մի հոգևոր ամբողջություն:

Սրբարույս մեռունի դրոշմով է դարձալ, որ ի սփյուռք աշխարհի ցրտած հայությունը անքալտելիորեն կապված է իր սրբություն սրբոց, հայ հոգու վիճարան ամենայն հայոց Մայր Աթոռ ու. Էջմիածնին և մեր հայրենի հողին ու սրբություններին:

Այս զգացմունքներով ու խոհերով է, որ ոխտավոր և հավատավոր աշխարհավորմ բազմությունը երկրուղածորեն համբուրում էր սրբարույս մեռունի կաթոսան, հաղորդակցվելու իր պապերի անմահ հոգիների, լույս հնովատքի և պայծառ տեսիլքների հետ:

ԾՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 5-ին, Կիրակի.—Սրբարույս մեռունի օրինության հանդիսությունից հետո, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական լավորով, եղուկ ու խնկով և ժողովրդական խանդավառ արտահայտությունների ներքո, առաջնորդվում է Վեհարան՝ օրվա սոնի առթիվ շնորհներու համար շնորհավորություններ:

Հոգևորական հայ և օտար ամբողջ դասը, պատգամավորները, հյուրենոր, ոխտավորները և այլ պաշտոնական անձեր տեղեր են գրավում շքեղ գահապահում:

Հայոց Հայրապետը բազմում է գահի վրա:

Հանուն հայ եկեղեցու լրության, բովանդակ հայ ժողովրդի, սրբարույս մեռունի օրինության ուրախ առթիվով, Հայոց Հայրապետին սրտառուշ բարեմաղթություններով շնորհավորում է Մայր տաճարի լուսարարապետ աշ. Հայկազուն արքեպ. Արքահամբանը, նշելով, որ «սրբարույս մեռունը, իբրև հոգևոր գրահ ամեն տեսակ փորձություններու դեմ և կնիք սուրբ Հոգի, կորոշմվի նաև հայ զավակներու ճակտին իբրև հայկականության վկայություն»:

Հանդիսության ավարտին շնորհակալության և գոհունակության շերմ խոսք է ասում Հայոց Հայրապետը, օրինում ազգն ու եկեղեցին՝ մաղթելով Մայր Աթոռին՝ անասանություն, հայ եկեղեցուն՝ պայծառություն, հայրենիքին և ժողովրդին՝ բարօրություն, և աշխարհին՝ խաղաղություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒԽԵԼՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 5-ին, Կիրակի, երեկոյան ժամը 18-ին, Երևանի «Սասուն» նորարաց ճաշարանի սրանում Գերագոյն հոգևոր խորհուրդը կազմակերպել էր պաշտոնական ընդունելություն՝ մեռունօրինության առթիվ:

Ընդունելությանը ներկա էին Երևանի պատրիարք առքեպ. Եղիշե արքեպ. Տերտելյանը, Կ. Պոլսի պատրիարք առքեպ. Գալստյանը, հայ ե-

կեղեցու ներքին և արտաքին թեմերի առաջնորդները, արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ և հոգևոր գործիչներ:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հրավերով այստեղ էին ուստի ողջափառ եկեղեցու պատվիրակությունը, որը գլխավորում էր Տալլինի և Էստոնիայի միտրոպոլիտ, և Սինոդի անդամ Ալեքսին, Վոլորդանսկի եպիսկոպոս Պիտիրիմը, Քիշնևի և Մոլդավիայի եպիսկոպոս Վորֆոլեմերը, վրաց եկեղեցու ներկայացուցիչներ՝ Ալավերդու և Բոթմանի եպիսկոպոս Անտոնը, Սովորումի եպիսկոպոս Խլիան, Հռոմի կաթողիկ եկեղեցու Պապի Զ Պապի ներկայացուցիչները՝ հայր Ժ. Համբերը և հայր Դյուարեն, Եկեղեցիների համաշխարհային խորհրի ներկայացուցիչներ և. Վիշերը, Ժ. Դ. Ժիգիուսասը, հայ ավետարանական եկեղեցու ներկայացուցիչներ՝ Վերապատվելիներ և. Սելիսյանը և Ս. Սովահյանը (ԱՍՆ):

Ընդունելությանը ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաբյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննեսյանը, Արտասահմանյան Երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերության նախագահ Ռ. Պարսամյանը, գիտության, արվեստի գործիչներ և մամուլի ներկայացուցիչներ:

Սեղանը օրինում է Վեհափառ Հայրապետը: Այնուհետև խոր առնելով Նորին Սրբությունը նշում է սրբազն մեռնի օրինության առթիվ ստեղծված խանդավառությունն ու ոգևորությունը և անդրադառնում Մայր Աթոռ և. Էջմիածնի հոգևոր-եկեղեցական-հայրենասիրական առաքելությանը և բաժակ առաջարկում Մայր Աթոռի անասանության և պայմանագրական կենաց:

Ամբողջ սրահով մեկ թնդում է միարերան երգված «Էջ Միածնին ի Հօրէ» շարականը:

Հայոց Հայրապետը երկրորդ բաժակը առաջարկում է բարձրացնել մեր վերածնած մայր հայրենիքի կենաց, հայրենիք, «որու ծոցին մեջ,—նշում է հայրենաներ Հայրապետը,—նոր զարթոնք, նոր ծաղկում կապրինք որպես եկեղեցի և ժողովուրդ, և ինչպես միշտ, և այսօր մանավանդ, մեր եկեղեցին և մեր հոգևորականները միշտ պիտի ըլլան մեր հայրենի նորին կողքին, մեր ժողովուրդին հետ: Մեզի համար թանկագին են յե՛ ժողովուրդը և յե՛ հայրենիքը: Անոնք մե՛րն են և մենք անոնցմե անբաժան»:

Այնուհետև, ի դեմ ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաբյանի, Վեհափառ Հայրապետը երախտագետ սրտով բաժակ է բարձրացնում հայրենի բարեխնամ կառավարության հայրենանվեր հետագա էլ ավելի փառավոր գործերի հաջողության համար:

Սպա Հայոց Հայրապետը Էկումենիկ ոգով ողջունում է նաև քույր եկեղեցիների պատվաժան հյուրերի ներկայությունը, որպես եղբայրական սիրո անկեղծ արտահայտություն դեպի Մայր Աթոռ և. Էջմիածնն ու դեպի ժողովուրդը:

Վեհափառ Հայրապետը մասնավոր կարևորությամբ նշում է նր կողքին, Մայր Աթոռի մեջ Երուսաղեմի հայոց ամեն. ա. Եղիշեն և Թուրքիայի հայոց ամեն. ա. Շնորհի սրբազն պատրիարքների ներկայությունը, որպես հայ եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալների, Աթոռներ, որոնք իրնեց ողջ պատմության ընթացքում Մայր Աթոռի հետ ձեռք-ձեռքի տված եկեղեցական, կրթական, հոգևոր և ազգային մեծ դեր կատարեցին, ամբողջական

ու անաղարտ, մեկ ու անբաժան պահելով դարերի փոթորիկների մեջ այն մեծ ժառանգությունը, որ հայ եկեղեցին է և մեր ժողովորդը:

Վեհափառ Հայրապետը, ի դեմս երկու սրբազն պատրիարքների, բաժակ է բարձրացնում ողջ հայ հոգևորականության կենացը, այդ թվում՝ բնակալ առաջնորդների, հայրապետական պատրիարքների, վարդապետների. բահանա հայրերի և սարկավագների, որոնք նվիրումով ու նավատարմութեն կլատարեն հոգեւոր սպասը մեր ժողովրդի կարիքների:



Սիրալուս մեռնի օրինության մի պահ

Սեղանների շուրջ ստեղծված խանդավառությունը ավելացնում են հայկական նվազքն ու երգերը:

Վեհափառ Հայրապետը իր բարձր ուշադրության է արժանացնում հայ թե՛ սիյուռքի և թե՛ Աերքին թեմերի թեմական, եկեղեցական խորհուրդների կատարած աշխատանքները՝ մեր եկեղեցու մեջ, մեր ժողովրդի ծոցում, և վերջին բաժակն առաջարկում է խմել այդ հավատավոր, բարի և ազնիվ աշխարհական մարդկանց կենաց:

Այս ուրախ առիթով Վեհափառ Հայրապետը իր բարձր ուշադրության է արժանացնում երկու պատվական աշխարհականների՝ նրանց կուրծքը գարդարելով և Գրիգոր Լուսավորչի Ս. կարգի շքանշանով. նրանցից առաջինն է համեստ, ազնիվ ու հայրենասեր, բեյրութահայ Սարգիս Սարգսյանը, կնքահայր սրբալուս մեռոնի, որը հավանաբար «գոյի չափ զետան իւր», 10.000 դոլլար նվիրեց այս առթիվ Մայր Աթոռի պայծառության համար:

Այնուհետև, Բուլղարիայից Օննիկ Սալահյանը, որը օգտակար է եղել երկար տարիների իր թեմական նվիրված աշխատանքներով և Մայր՝ Աթոռի համեմատ իր բացառիկ ծառապությամբ:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետին ողջունում են սրբազնչ եղույթներով տ. Եղիշե սրբազն պատրիարքը, ԱՄՆ-ի թեմական-պատգամավորական ժողովի առենապետ Տիգրան Բոյաջյանը, Երվանդ Նիկողոսյանը՝ հանուն Լոնդոնի Հ. Բ. Ը Միության, Լուս Շաղդյանը՝ հանուն Իրաքի հայոց թեմի, Կարս Մարտինը՝ հանուն Բնականայ թեմի, փաստաբան Պերճ Կարապետյանը՝ հանուն ուսմինահայ թեմի, որը և ընթերցում է պրոֆ. Հ. Շ. Սիրունու ողջույնի գիրը՝ Վեհափառ Հայրապետին ողջված, Ավետիս Դեմիրճյանը՝ հանուն «Արարատ» օրաթերթի (Լիբանան), և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը:

Ընդունելության ավարտին, Հայոց Հայրապետի անունով և Նրա օրինական ամբողջական բաժանմում է սրբալույս մեռությունության մեջ՝ ներ՝ արծաթից, բրոնզից պատրաստված, Մայր տաճարի և սրբալուս մեռունի կաթոսայի նկարով (գործ՝ ճարտ. Բ. Արգումանյանի և վաճիքի ոսկերիչ վարպետ Ժիրայր Չուլյանի):

Ընդունելությունն ավարտվում է գիշերվա ժամը 11-ին՝ խմբովին նրգված «Հայր մեր»-ով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբերի 6-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, քոյլ նկեղեցիների ներկայացուցիչները այցելում են Մայր տաճարի եկեղեցական արվեստի թանգարանը, ապա ս. Գյանեն և ս. Հոփիսիմե վաճեքերը:

Ժամը 12-ին հյուրերը այցելում են Երևանի տեսարժան վայրերը, ապա ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանը, որ և մեծ հրացմունքով ծանրթանում են հայ մշակույթի և հայ արվեստի անկրկնելի գանձերի հետ:

Ժամը 13-ին հյուրերը այցելում են Ծիծենակարերդ՝ Հայ նահատակաց հոլշարձանը, և «Հոգոց» արտասանում հայ նահատակների հիշատակին:

Ժամը 14-ին քոյլ նկեղեցիների հարգարժան ներկայացուցիչները ուսանում են գնում Օշական՝ ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը՝ իրենց երկրուղած սրտի հարգանքը մատուցելու հայ մշակույթի մեծ երախտավորին:

Երեկոյան ժամը 18-ին հոգնոր ճեմարանի հարկի տակ հյուրերի պատվին կազմակերպվում է գրական երեկոյաց:

Հոգնոր ճեմարանի տեսուց տ. Շնորհիք Վորդ. Գասպարյանը, հանուն դասախոսական կազմի և ուսանողության, իր անգլերեն եղույթի մեջ ողջունում և հյուրերի ներկայությունը և խոսում է հոգնոր ճեմարանի նպատակի և նշանակության, ուստմանական ծրագրի, աշակերտության թվի և ուսանողական առողյան մասին:

Հոգնոր ճեմարանի ուսանողական երգչախումբը կատարում է հայերեն, անգլերեն և ուսւերեն լեզուներով մի շարք հոգնոր երգեր և խմբերգեր:

Մշակերտներից ոմանք հանդես են գալիս արտասանություններով:

Ա. Ղարաբանի ուսանող Մրշակ Տայանը (ԱՄՆ-ից) անգլերեն գրավոր մի ուղերձով ողջունում է հյուրերի ներկայությունը և խոսում հայ թարգմանիչ վարդապետների տոնի մեծ նշանակության մասին՝ մեր եկեղեցու և մատենագրության պատմության մեջ:

• Տ. Ալեքսի միտրոպոլիտը, հայր Ժ. Համբերը և Լ. Վիշերը հանդէս են գալիս ուսանողության ուղղված ողջումն ու օրինության խորերով, որոնք զերմորեն ընդունվում են բոլոր ներկաների կողմից:

Հանդիսությունն ավարտվում է խմբովին եղագած Տերութական աղոթքով:

Հոկտեմբերի 7-ին, երեքշաբթի օրը, առավույան ժամը 11-ին, քոյր եկեղեցիների ներկայացուցիչները մեկնում են Գառնի և Ա. Գեղարդա վանք:

Աշնանային հրաշալի, պայծառ ու հաճելի օր է: Հյուրերը վայելում են հայոց աշխարհի բնության աշնանային գեղեցկությունը:

Ծանապարհին, Չարենցի հուշարձանի առաջ, դիտում են Վեհափառ Սասիսերը և ապա Գառնիում հետաքրքրությամբ դիտում ամրոցի, տաճարի ավերակները:

Այնուհետև հյուրերը այցելում են Ա. Գեղարդի պատմական վանքը:

Վանահայր տ. Նարեկ Վրդ. Շաքարյանը խնկով ու շարականով ընդունում է հյուրերին, առաջնորդում եկեղեցի, որը նրանք կատարում են իրենց ալորթմ ու ուսուցում հանգամանորեն ծանոթանում վանքի պատմությանը, որպես հայ մշակույթի վառ օջախներից մեկը, եկեղեցական շենքերի ճարտարապետական բորահատուկ կառուցին, խաչքարերին և վայելում բնության գեղեցկություններն ու հրապուրը՝ հոգեկան մեծ բավականությամբ:

Վանահայր տ. Նարեկ Վրդ. Շաքարյանը հյուրասիրում է նրանց վանական համեստ սեղանով:

Հյուրերը Մայր Աթոռ են վերադառնում ժամը 15-ին՝ լավագույն տպավորություններով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՍԴԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհապետի հանդիսությանց դաჩիխում նշվում է Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակը և գահակալության 14-ամյակը:

Եպիսկոպոսաց ժողովի գումարումից և սրբալոյս մեռնի օրինության նվիրված հանդիսություններից նետո, առանձին կարևորությամբ նշվում է նաև Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակին և գահակալության 14-ամյակին նվիրված տոնակատարությունը:

Հոկտեմբերի 7-ին, երեքշաբթի օրը, Վեհարանի հանդիսությանց դաჩիխում ժամանակից առաջ լեցվել է պատգամավորների, հյուրերի, ուսուուվորների բազմությամբ:

Ժամը 18-ին դաჩիխ է մոտք գործում Վեհափառ Հայրապետը հանդիսականների սրտագին ծափողունների մեջ և պատվո սեղանի շուրջ իր տեղն է գրավում:

Նախագահության սեղանի շուրջ են նաև տ. Եղիշե և տ. Շնորհը սրբազն պատրիարքները, տ. Ալեքսի միտրոպոլիտը, տ. Հայկազուն, տ. Սերովը արքեպիսկոպոսները, տ. Իլիա եպիսկոպոսը, հայր Ժ. Համբերը, Լ. Վիշերը:

Նախագահության սեղանի շուրջ են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առջնորդ հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը և ՍՍՀՄ Մինիստրների սովետին առջնորդ կրոնական գործերի խորհրդի անդամ Տարասովը:

Հանդիսությունը սկսվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով:

Աշխատանքն դաჩինով մեկ հնչում է ՀՍՍՀ պետական հիմնի նվագը:

Հորելլանական հանդիսությունը ղեկավարում է տ. Շնորհը պրեզենտացան պատրիարքը, որը համեն է գալիս հետևյալ բովանդակալից ողջումնի խոսքով.

ԱՄԵԽԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

«Վեհափառ Տեր,

Սրբազնագույն կաթողիկոս Ամենայն Հայոց,
Սրբազն և հարգարժան ներկաներ.

Ինձի վիճակված է շնորհը և պատիվը բացման խոսքն ընելու հորեղինական այս հանդեսին, և գործադրելու անոր բովանդակալից հայտագիրը:

Նախքան խոսքին անցնելը անհատն սիրով և խոր ուրախությամբ կողշունենք ներկայությունը այս հանդիսավոր հայաբույժին բարձրապատիվ և բարձրաշնորհ առաջնորդներուն, Հայաստանյաց եկեղեցւու բոլոր թեսերուն, ինչպես նաև գերաշնորհ, հոգեշնորհ և արժանաշնորհ հայրերու, հարհարգելի և վերապատվելի պատգամավորներուն:

Կարժան պատգամավորներու թեմական իշխանությանց և սիրեցյալ հրատիրայլ հյուրերու: Հասուկ շերմ զգացմունքով կողշունենք ներկայությունը հայրենի պետության մեծահարգ ներկայացուցիչներուն, ու քոյլ եկեղեցիներու գեր-


Այստեղ է, Վեհափառ Տեր, ափյուղի և հայրենիքի համայն հավատացյալ ձեր ծողովուրդը հանձին իրենց ներկայացուցիչներուն և պատգամավորներուն, բոլորված իրենց սիրեցյալ և Սրբազնագույն Հայրապետին շուրջը, արտահայտելու համար իրենց սերը և երախտիքը հանդիսական այս աղիթով:

Ուրախ ենք ամենքով, մեծով և պատիկով, հյուրով և հրավիրյալով, որ կտրվի մեզի այս երջանիկ պատեմությունը անդրադառնալու մեր Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակին և Անոր գահակալության 14-րդ տարեդին:

1955 թվին, գրեթե միշտ այս օրերուն, խանդավառ մթնոլորտի և հանդիսավոր իրադրությանց մեջ, Մայր տաճարի զանգակները կավետեին գրեթե մրածայն ընտրությունը Ամենայն Հայոց նոր Հայրապետին, հանձին Ռումինի և Բուլղարի համակրեի առաջնորդին, Վազգեն եպս. Պալճյանին: Անցնող երկու յոթնյակ տարիները եկան հաստատել թե, համայն եկեղեցւու և ազգին ներկայացուցիչները կատարած էին լավագույն ընտրությունը. Վասնակ այդ տարիները փաստորեն կիամողեն ամենքս թե նորին Ս. Օծություն Տ. Ս. Վազգեն Ա. Սրբազնագույն կաթողիկոսը լիովին հրականացուցած է, մինչև իսկ, տեղական գեղեցիկ բացատրությամբ մը, գերակատարած է այն հույսը, որոնք կապված էին իր ընտրության:

Մենք, մեր բացման այս քանի մը խոսքերով պիտի չկրնանք անդրադառնալ Վեհափառ Հայրապետի այնքան բեղուն 60 տարիներուն, և նույնքան արդյունաշատ հայրապետական գործունեության: Կենթադրենք որ զայն լիովին պիտի կատարե օրվան զեկուցիչ սրբազնը:

Մենք սակայն պիտի չկրնանք դիմադրել քաղցր փորձության գեր ընդգծելու երկու կարևոր երևույթներ, և ընելու այդ մասին կարճ խորհրդածություններ: Այդ երկու երևույթներն մին բացառիկ է մեր հայրապետներու տարեգրությանց մեջ. իսկ մյուսը նորին Ս. Օծությունը արժանապետ և իրավամբ կրաքարացնեն մեր եկեղեցիի մեծանուն կաթողիկոսներու շարքին:



Սուածինը մեր Հայրապետի հովվապետական այցելություններն են: Իր մե առաջ ոչ մեկ կաթողիկոս հավասարած է իրեն. իսկ իրմեն հետո ալ կենաքարենք որ ոչ մեկ հայրապետ պիտի կրօնա գերազանցել զայն: Այս հովվապետական այցելությանց կարևորությունը կկայանա հատկապես այն իրողության մեջ, որ անոնք ուղղակի կապ ունին հոգիներու և հավաքականություններու հետ: Եվ ապրոյ ու շնչող հոգիներու և մարդկային զանգվածներու հետ գործ ունենալը միշտ առաջին գծին վրա կուգա քրիստոնյա գործիչներու կյանքին մեջ:



Քույր եկեղեցիների Անրկայացուցիչները Մայր տաճարում

Ըլլա՝ Սովետական Միության սահմաններուն մեջ և ըլլա՝ մանավանդ սրբատափահմանի հինգ աշխարհամասերուն մեջ ցրված իր վտարանի հոտին տված իր բազմաթիվ այցելություններով մեր Վեհափառ Հայրապետը կատարած եղավ իսկական առաքելական գործունեություն:

Մեր առաջին կաթողիկոսները, ս. Լուսավորիչ և իր ամբողջ սերունդը, որոնք ավելի քան դար մը տիրաբար հովվեցին Հայաստանյաց հոտը, իրենց զահին կամ կեղրոնին կառչած հովվապետներ չեղան, այլ՝ իսկական առաքելատիպ առաջնորդներ, որոնք նահանգե նահանգ և գավառե գավառ մաս եկան, հովվական ցուպը ի ձեռին, շարունակաբար անձնական շիման մեջ մնալու համար իրենց ժողովուրդին հետ, արմատացնելու և առավել ևս ամ-

դապնդելու համար անոնց հավատքը ավետարանական վեմին վրա: Անսպասիկ առաքելատիպ հայրերու այս ավանդությունն է, որ վերանորոգեց Տ. Տ. Վազգեն կաթողիկոսը, անձնական շիում հաստատելու համար աշխարհի գրեթե բոլոր ծագերուն ցրված իր ժողովուրդին հետ:

Հայոց Հայրապետությունը մեր ժողովուրդի հնագույն հաստատությունն է, որուն շարունակության դարավոր պողպատ շղթան երթեք չէ փշրված ժամանակներու ժամանեն, ոչ ալ՝ տարերային փոթորիկներու: Ամենայն Հայոց Հայրապետը այդ շարահարյալ մշտնչնական շղթային ժամանակակից օդակն է. Ան իր անձին մեջ կմարմնավորե մեր ժողովուրդի ամբողջ քրիստոնեական անցյալը, իր դյուցազնական դրվագներով, և գեղարվեստական ու մշակութային ազմիվ իրագործումներով: Ուրեմն Ամենայն Հայոց Հայրապետի մեր զանազան համայնքներեն անցքին հետ, ոչ միայն Ավետարանի պատգամները կվերակենդանան և նոր իմաստ ու տարրություն կատանան իր շրմերուն վրա, այլ կարծես համեկարծ կհանեն և կյանքի կիրշվին իր անձին վրա մեր պատմության պայծառ դեմքերը, որոնք ինչպես իրենց ժամանակին նույնական մեր ժամանակներուն կկենսավորեն մեր ժողովուրդի ներաշխարհը և կլուսավորեն իր երթի ճամփան:

Խոչոր ազդակ մըն է նաև Ամենայն Հայոց Հայրապետության արմատացած ըլլալը հայրենի հարազատ հողին վրա, որմե ևս ողջուն և օրինություն կտանի, որմե ևս շունչ ու շնորհ կրաշխն, որ որ երթա Վեհափառ Հայրապետը: Ով որ կնպաստե որ ժողովուրդ մը չխորանա իր հայրենի հողը, և չուրանա իր պատմությունը, նա մեծագույն դերը կատարած կլինի այդ ժողովուրդը այլաւերումի վտանգնե փրկելու աշխատանքին մեջ: Ու Վեհափառ Հայրապետը երախտիքի արժանի բացադի դեր կատարած է այս մարզի մեջ, իր հովանական այցելություններով:

Կոյսուրագույն մյուս իրագործումը, զոր կուգենք ընդգծել անցողակի պատրիարքատիկ առիթով, եղավ Մայր Աթոռի ամբողջական վերականգնությը Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն կաթողիկոսի օրով: Խորեն Ս. Կաթողիկոսի մահվամբ և հետ այնու Հայոց Հայրապետությունը մատնվեցավ անտերունչ վիճակի, որ գտնվեցավ ան ասկէ լման 80 տարիներ առաջ: Գերոգ Զ կաթողիկոսով վերակենդանության բացահայտ հշանենք ցույց տված Աթոռը: Ու այդ վերակենդանությունը իր լրիկ ծաղկումը գտավ, և պտղաբերության հասավ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոսի օրով: Փատերը խվել հարկ չենք տեսներ: Քարերը կաղաղակեն արդեն այդ մասին: Ու այդ վերելքը և վերանորոգությունը իր խորհրդանշական արտահայտությունը գտած է վերանորոգյալ ու ճշխացյալ Վեհարանի հոյակերտ սա կառուցին մեջ, որ պատիվ կրերե ուսէ եկեղեցիի, հոգ չէ թե որքան մեծ ըլլա այն, կամ որքան ծաղկյալ ու կենսունակ:

Մենք բացարձակական վստահ ենք, թե այն հոգեկան արիությունը, այն համբուրեկի լավատեսությունը, ու վերջապես այն հետևողական հարատևությունը, որոնցմով գոտեանդված Վեհափառ իրագործեց Մայր Աթոռի վերելքը և վերածաղկումը, նոյն ոգին առաջնորդ պիտի հանդիսանա Նորին Ս. Օծության ի կատար ածելու համար գալիք նոյնքան կարևոր իրագործումները:

Վեհափառ Տեր, Միքաղեագույն կաթողիկոս Ամենայն Հայոց, հանուն Հայց, առաքելական եկեղեցվո սրտագիւն և որդիաբար կշնորհավորենք Զեր բարեբաստիկ ծննդյան 60-ամյակը: Կհայտնենք ամենքին երախտիքը

Զեր բազմատեսակ ու բազմաթիվ իրագործումներուն համար, ս. Լուսավորչի հայրապետական գոհին վրա, անցնող տասնչորս տարիներու ընթացքին:

Մենք, Զերդ Սրբության գործակիցները և հարազատները միշտ Զեր կողմին կանգնած թռն և թիկունք պիտի ըլլանք Զեզի: Զերմորեն պիտի շարունակենք աղոթել, որպեսզի Աստված Հարցն մերոց շարունակ պարզեն Զեր Ս. Օծության տոկուն առողջություն և աստվածատոր ուժեր, առավել չափով հարստացնելու համար Հայց, եկեղեցին հոգևոր մնայուն բարիքներով, և առավել նպաստելու համար քիրատնյա եկեղեցիներու եղբայրական գործակցության: Շարունակելու համար բազում լուսավոր տարիներ Զեր եկեղեցաշեն գործունեությունը այս պատմական Աթոռին վրա, ի պայծառություն Հայց, եկեղեցվո, ի միհիթարություն ազգին հայոց և ի փառ Աստուծո:

Թող երկար ապրի որեմն Հայոց Օճառ Հայրապետը, Նորին Ս. Օծություն Վազգեն Ա:

Թող Աստված անսասան պահե Մայր Աթոռը ս. Էջմիածնի:

Ու թող հավերժ ապրի այն բազմաշնորհ ժողովուրդը, որ ծնունդ կուտանման շնորհալի զավակներու:

Ազնութեան տ. Ծնորիք պատրիարքը խոսք տալիս է ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանին, որը հրապարակում է ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանի հոկտեմբեր 7 1969 թվակիր ողջունի գիրը, որը տպած է «Էջմիածն» ամսագրի սույն համարի էջ 9-ում:

ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի անդամ Տարատվը հրապարակում է ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վ. Կորույեղովի հոկտեմբեր 6 1969 թվակիր ողջունի գրությունը, որը տպագրված է «Էջմիածն» ամսագրի սույն համարի էջ 10-ում:

Ապա Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակի և, մասնավանդ, գահակալության 14 տարիների գործունեության մասին ընդարձակ և բովանդակալից զեկուցումով հանդես է գալիս, հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, Արևմտյան Եվլուպայի հայոց հայրապետական պատվիրակ, Ֆրանսիայի հայոց առաջնորդ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Սերովը արքեպ. Մանուկյանը:

Զեկուցող սրբազնը նշում է, որ «1955 թվականի սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ ս. Էջմիածնի մեջ գումարված հայ ազգային-եկեղեցական ժողովը Ամենան Հայոց կաթողիկոս ընտրեց Ռումինիայի և Բուլղարիայի առաջնորդ տ. Վազգեն Եպիսկոպոս Պալճյանը և նույն թվականի հոկտեմբերի 2-ին փառաջորդ հանրիսավորությամբ Մայր տաճարի մեջ տեղի ունեցավ ազգնութիւն կաթողիկոսի օծումը»:

Այդ պատմական օրեն մինչև այսօր անցած է 14 տարի: Այդ ժամանակամիջոցին նորին Ս. Օծությունը հավատարմությամբ, նվիրումով և հավատքով տարած է իր հայրապետական ծանր լուծը՝ պարտքի խորը գիտակցությամբ: Այդ 14 տարին փառաջորդ գործունեությամբ բովանդակալից և սըխունքներով հարուստ ժամանակաշրջան մըն է, որ ուկե տառերով կզարդարն հայոց կաթողիկոսներու պատմության էջերը»:

Այնուհեան տ. Սերովը արքեպիսկոպոսը հանգամանորեն խոսում է հոգևոր, եկեղեցական, կրթական, վարչական-շինարարական, միջեկեղեցական և հայրենասիրական ոգևորիչ և խանդակառ այն իրագործումների մա-

սին, որոնք երախտագիտական խորը գգացմունքներով լցնում են յորաքանչյուր նայ հավատացյալ ու հայրենասեր մարդու սիրուր:

Ձեկուցող սրբազնը իր եղույթի մեջ հատկապես կանգ է առնում ներքին թեմերի կազմակերպման, վարչա-և նույնական գործերի արդյունավետ դեկավարության, հոգևոր ճեմարանի դերի և նշանակության, նրա մակարդակի լրարձրացման, ճեմարանից ներս տարված ուսումնա-դաստիարակչական մեծ աշխատանքների, Մայր Աթոռոյի պաշտոնաթերթ «Հջմիածին» ամսագրի կանոնավոր ու բովանդակալից հրատարակության, Մայր Աթոռոյի ֆինանսական գործերի բարփոքման վրա, որի հետևանքով եկեղեցական եկամուտներն աճեցին և կրկնապատկվեցին, և ապա Ն. Ս. Օծության անմիջական դեկավարության ներքո շուրջ 12-ամյա շինարարական ծավալուն աշխատանքների վրա թե՛ Մայր Աթոռոյի ներս և թե՛ նրա շրջապատից դորս:

Այսուհետև տ. Սերովք արքեպիսկոպոս խոսում է հայրապետական գործունեության 14 տարիների ընթացքում Մայր Աթոռոյի, նվիրապետական մյուս Աթոռների, թեմերի, քույր եկեղեցիների և կրօնական այլ կազմակերպությունների միջև տեղի ունեցած հարաբերությունների, փոխադարձ այցելությունների մասին, նշելով նման համագործակցության կարևորությունն ու անհրաժեշտությունը մեր եկեղեցական կյանքի համար:

Վեհափառ Հայրապետի 14-ամյա գահակալության գործունեության մեծ իրազործումներից մեկը եղավ նաև, նշում է զեկուցող սրբազնը, հայրապետական-հովվական այցելությունները սիյուռքի հայությանը, որպես երկնառար միխթարություն՝ գաղտաշխարհի հայությանը, որը ապրում է ս. Եջմիածնի օրինության ներքո և հայոց աշխարհի վերածնության խանդավառ զգացմունքով:

Հայոց Հայրապետը իր հայրենասիրական-խաղաղասիրական լայն գործունեությամբ, նշում է Սերովք արքեպիսկոպոսը, դորս է եկեղեց մեր ազգային շրջանակներից և դարձել եկեղեցական մեծ գործիչ՝ համաշխարհային չափանիշով:


Տ. Սերովք արքեպ. Մանուկյանը իր ոգլուրիչ ու բովանդակալից բանավոր զեկույցը ավարտում է ներկաների խանդավառ ծափերի ներքո՝ սրտագիլ բարեմալություններով:

Այսուհետև տ. Շնորհը պատրիարքը ողջույնի համար խոսք է տալիս տ. Եղիշե պատրիարքին.

S. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

«Այսօր հավաքված ենք այստեղ՝ մեր երախտագիտության և որդիական սկզբանքի սրտառուց տուրքը մատուցանելու հայ եկեղեցվոր մեծ Առաջնորդին և Վերադիտողին, Անոր ծննդյան 60-ամյակի և գահակալության 14-ամյակի ուրախ առիթով, և ասիկա շնորհիվ իր անբասիր նկարագրի, իմաստուն տքնության, հոգեկան ուժի և արդյունավոր գործունեությանը:

Ով կրնա Տիրոց Տան մեջ իրմէ ավելի համարձակությամբ սահմոսերգել. «Այլ ես իբրև ձիթենի պտղալից ի Տան Աստուծոյ»: Իբրև Գլուխ և Դետ հայ եկեղեցվոր միշտ բարձր եղած է իր տեսակետը, նման բոլոր ամոնց, որոնք հաստատուն իիեալեն քաղաք են իրենց ներքին մղումներում: Փրկելու, քան դատապարտելու սկզբունքը իր խղճի ամենն տիրական խորհուրդներեն մին է եղած, որովհետև նորին Սուրբ Օծությունը չէ գիտցած ազդվիլ ատելու-



ՔՈՒՅՐ ԵՎԸԼԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆԻՑԻՇԽՆԵՐԸ ՄԱՅԻ ՏԱՏԱՐՈՒՄ

թյուններե, վերեն նայած է փոքրություններուն և նախընտրած է մարդոց և գործերու բարի կողմերը տեսնել միայն:

Իրավեն դժնիակ վայրկյաններու, իրավեն թիրտ և պինդ դժվարություններու մեջ եղած է խաղաղ և անթեք, որովհետև զգացումները և մտածումները կրցած են գտնել իրենց ներքին ներդաշնակություններ:

Հիմները կհավատային, թե մարմնին գեղը պահարան է գեղեցիկ հոգիին: Չեմ գիտեր, թե բնախտարեն որքան ճիշտ է ասիկա, և սակայն թույլ կրտաք ինձի ըսելու, որ Նորին Սուրբ Օծության պարագային ճշմարտություն էր ատիկա:

Այդ է պատճառը անտարակուս, որ հայ ժողովուրդը Վազգեն կաթողիկոսը դիտած ու տիտղոսած է «սուրբ» մակրիուս:

Ժողովուրդները իրենց հոգին է, որ կրաշխն այս մակրիկները, որովհետև ներակայի աշքերուն խորը և դեմքի վրա կտեսնեն լուսեր՝ տեսիլքներու աշխարհնեն ծագած:

Խոսողները ընդհանրապես երբ իրենց դեմ ունեն կենդանի անձնավորություն մը, չափազանցնելու վտանգին կենթարկն ինքինքնին:

Այս պահուս ճիշտ հակառակ դողի է, որ կշարժի իմ մեջս, արժանիքներով լեցուն օծյալի դիմաց:

Հաճախ ուզած եմ պերճախոս մը ըլլալ: Այս պահուս դարձյալ կզգամ այդ կարիքը և կփորձեմ վեր բերել Նորին Ս. Օծության բազմերես մարգարիտները, որոնք իրենց խեփորեն դուրս ցայտող մարգարիտներու պատկերով կներկայանան մեզի, քանից և հանգուցի՛չ:

Եկած ենք բոլորս և մեզի հետ ամբողջ հայ ժողովուրդը տոնախանքելու ՅՈ-ամյակը Նորին Ս. Օծություն Տ. Ս. Վազգեն Ա կաթողիկոսի Ամենայի Հայոց, Լուսավորչի Աթոռի այժմու վերադիտողին, որ արժանիքի մը պյունի պես կկանգնի մեր բոլորի առջն, և որուն նայելով կրնանք հայտարարել առարյանին հետ, թե «մեզի ալ այսպիսի քահանայապետ մը պետք էր, սուրբ, արդար և անարատ»:

Եկած ենք բոլորս հանդիսավոր գիտակցությամբ, որուն խորքը հիացում կկազմն, մեր սերն ու զմայլանքը բերելու այն մեծ եկեղեցականի, որուն անունը հոմանիշ է հավատարմության, սիրո, աշխատության և հավատքի:

Բոլոր անոնք, որոնք կճանշնային զինքը իր զգացումներու անկեղծության մեջ, և Մայր Աթոռով՝ իր կարիքներու խորությամբ, զգացին և կզգան այսօր մանավանդ թե իր ընտրությամբ նոր թվականի մը առավոտը կծագեր տուրք Աթոռո երկնքի ներքն: Այս մտածումը իր մեջ ոչինչ ունի պատրողական, որովհետև արդյունքն է ոչ թե զգացումի մը, այլ սկզբունքի մը: Այդ սկզբունքը այն հասկացողությունն է, թե համայնքներու շինույթան գործի մեջ պետք ունինք մենք բարոյական և մեծ անձնավորություններու:

Մեր ժողովուրդի լավագույն օրերը կզուգադիմին իր բարոյական անձնավորություններու խվականին: Ցուրաքանչյուր այդ թվականներու վերև և սավալունի դեմքը և անոնք մեծ անձնավորություններու, որոնք Աստուծո շունչը ունին իրենց մեջ, առաջնորդության ճշմարիտ իրականությունը հավատարիմ: Որովհետև առանց անոր մենք պատրողական պատրանքի մը զոհ ենք, առանց անոր մեր մարմինը խանձող մըն է, մեր սիրտը՝ մղաձական մը, իսկ մեր գործը՝ անհմաստ շարժումներու տեսարան մը:

Պետք է խստովանիլ և ասիկա սրտի հանուարտությամբ, թե Նորին Ս. Օծության մեջ այդ մեծ մարդերու, այդ ներշնչված մարդերու հոգին խոշոր բաժին մը կա, և ատիկա բաժինը եղած է նաև բոլոր անոնց՝ մեր մեծ Հայուա-

պետներուն, որոնք ունեցած են այդ հոգին իրենց սրտին խորը, ինչպես նաև իրենց գրչին ծայրը և առաջնորդած սերունդները՝ դեպի կատարելություն:

Տամնչորս տարիներ առաջ եղան Ն. Ս. Օծությունը կը նուրբվեր իրեւ գահակալ Լուսավորչի Ալեռոյի, անոնք, որ կզգային թե շատ անգամ Արտոմերը գահին չեն, այլ խաչեր են, կզգային, թե ինչ մեծ ուշադրությամբ պետք է դիմագրավեր Ն. Ս. Օծությունը բոլոր դժվարությունները: Սակայն մեր ժողովորդի վստահությունը նաև այսքան մեծ էր իր Հայրապետին վրա: Վեհապահի բարեգարդումը, ճեմարանին և տպարանին տրված թափի, ինչպես նաև Մայր Արտոռ տնտեսական վերանորոգումը և այլ սրտագին իրագործումներ գեղեցիկ առեջներ եղան այդ մեծ երազի այդ մեծ թեզանին:

Մարդեր կան, որոնք ինչպես ըստած են, ծամանակին կպատկանին, և նարդեր կան, որ ճշմարտության կպատկանին: Անոնք, որոնք միայն ժամանակին կպատկանին, ծանծաղամիտ մարդեր են, իսկ անոնք, որ միայն ճշմարտության կպատկանին՝ վերացական անձնավորություններ են: Իրականի մեծ մարդը կպատկանի թե՛ իր ժամանակին և թե՛ ճշմարտության: Եվ դարձալ կը կը կնեմ, սրտի հանդարտ խղճանաբարով կրնաքը ըսել, թե Ն. Ս. Օծությունը կրցավ պատկանիլ թե՛ ժամանակին և թե՛ ճշմարտության, կրցավ տալ կույսրին կայսեր և զԱստուծոյն Աստուծո, կրցավ ոսկի օղակ ըլլալ ի՞ր եկեղեցին և ժողովորդի միջն, ի՞ր հայրենիքի և արտասահմանի ժողովորդին միջն և իրագործեց այն, ինչ որ իր գերագույն բաղձանք էր և ինչ որ մեր բոլորին բաղձանքն էր:

Վեհափառ Տեր, ես չեմ ուզեր երկարել խոսքս: Այս առիթով հանուն մեր եկեղեցվո լրության, ժողովորդին և պաշտոններության կմաղթեմ ի սրտե, որ Աստված Զեզի երկար և երջանիկ օրեր պարզեն, որպեսզի կարենաք տեսակը իրագործումը Զեր երազներուն, իրագործումը Զեր տեսիլներուն: Աստված յոդ անշարժ պահե Մայր Ալյոս և Էջմիածինը, ինչպես նաև մեր սիրելի սովետական հայրենիքը: Յոդ ոչ մեկ սև թռչունի թև անցնի իր վրայեն, յոդ ոչ մեկ բռնակալ՝ բռնւցք դառնա իր կողերուն. յոդ իր դաշտերը միշտ հորդին երգով, իր հնաձանները յոդ հորդին գինիով և ուրախությամբ, որպեսզի մենք կարենանք մեր սրտի խորեն ըսել՝ Օվաննա՛, նորանորոգ Հարուցելով՝ մեր եկեղեցին և մեր հայրենիքին:

Ապա Հայոց Հայրապետի ծննդյան 60-ամյակը և գահակալության 14-ամյակը ողջունում է, հանուն ուս պրավոլավ եկեղեցու և նրա պետ Ն. Սրբություն Տ. Ալեքսի պատրիարքի, Հաստնիայի և Տալինի միտրոպոլիտ Ալեքսին, որը և ընթերցում է Ալեքսի պատրիարքի հոկտեմբեր 3 1969 թվակիր ողջովնի գիրը, որը տպագած է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (Էջ 14):

Սովորմիի եպիսկոպո և տ. Թիան, հանուն վրաց ուղղափառ եկեղեցու և նրա պետ Ն. Սրբություն Տ. Եփրեմ Բ կաթողիկոսի, ընթերցում է հոկտեմբերի 5 1969 թվակիր ողջովնի խոսքը, որը նույնպես տպագրված է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (Էջ 16):

Ապա եղույթ է ունենում, հանուն հոռմեական կաթողիկ եկեղեցու, Բ. Ժերմ Համմերը, որը և նախապետ Ն. Սրբություն Պավելոս Չ Պայի ողջովնի գիրը անձամբ հանձնել էր Հայոց Հայրապետին (տես «Էջմիածին» ամսագրի սույն համարի Էջ 11):

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Հ. Ժ. ՀԱՄՄԵՐԻ ԵԼՈՒՅԹԸ

«Զերդ Սրբություն,

Այս հանդիսավոր առիթով ավելորդ եմ համարում Նորին Սրբություն Պավլոս Զ. Պապի զգացումներն արտահայտելու Զերդ Սրբությանը, քանի որ ինքն անձամբ արդեն արտահայտել է դրանք Զեզ ուղղված իր անձնական նամակում: Սակայն կարծում եմ, որ սխալված չեմ լինի, եթե ընդգծեմ, որ Նորին Սրբությունը եղբայրական սիրո և համակրության հատուկ զգացումներով կապված է Զերդ Սուրբ Օծույթանը, զգացումներ, որ նա տածում է: Զերդ նկատմամբ թե՛ որպես անձ և թե՛ միաժամանակ որպես կրոնական գերագույն պետք Հայաստանյաց եկեղեցու և աշխարհով մեկ սփոված համայն հնայության:

Երբ հայր Դյուպրեն և ես այցելեցինք ձեր եկեղեցիները, խորապես տպավորվեցինք՝ ձեր բոլոր եկեղեցիների խորանների վրա տեսնելով սուրբ Աստվածամոր նկարը: Եվ այդ մի պահ մեզ տարավ դեպի Ծփեսոսի ժողովը, որ տեղ սուրբ Կոյսը հոչակվեց Աստվածամայր ոչ թե այն նպատակով, որ ինչող նախապատիվ դիրք տրվի նրան, այլ որպեսզի նրա միջոցով փառավորվի ու հարգվի իր Որդին, որպեսզի միաժամանակ և նրա միջոցով բացահայտվի Քրիստոսի ամենագործ շնորհի գեղեցկագոյն վկայությունը: Եվ այս ասում եմ նենց նրա համար, որ Քրիստոսվ ու Քրիստոսի մեջ է, որ մենք մեզ զգում ենք նետզինտե ավելի սերտորեն միացած միմյանց: Նմանապես Քրիստոսվ ու Քրիստոսի մեջ է, որ մենք պետք է վերաճանաչենք ու գտնենք իրար որպես բոլոր եկեղեցիներ: Հայ եկեղեցին, ինչպես և բոլոր օրթոդոքս եկեղեցիներն ու հոնունական կաթողիկե եկեղեցին իրար միջև պետք է հետզինտե ավելի զարգացնեն այսայսի հարաբերություններ, որոնք հատուկ են քուր եկեղեցիների:

Համոզված եղեք, Զերդ Սրբություն, որ այս դատողություններն անելով՝ տուկ իմ անձնական գաղափարները չե, որ արտահայտում եմ Զեզ. այս գաղափարները արտահայտել է նաև Խքը՝ Նորին Սրբություն Պավլոս Զ. Հոռմի Պապը, հատուկ կերպով և բազմաթիվ առիթներով:

Մենք իրար նկատմամբ պետք է վերաբերվենք որպես քուր եկեղեցիներ. իսկ դա նշանակում է միմյանց հետ մշտապես հարաբերվել փոխադարձ հարգանքի, գնահատանքի և, ինչու չէ, նաև փոխադարձ օգնության զգացումով: Այս կապակցությամբ բազմաթիվ են օրինակները. ես կցանկանայի այստեղ նշել դրանցից մեկը միայն: Երբ վերջերս Ֆրանսիայի ուստավորների մի մեծ խումբ այցի եկավ այստեղ, ս. Էջմիածին, Շուք պատարագելու համար նրանց տրամադրության տակ դրեցիք ս. Հոփիսիմենի տաճարը: Եվ սա անշուշտ առանձին մի դեպք չէ. ինձ ծանոթ են նաև նախընթաց այլ օրինակներ, որոնք տեղի են ունեցել այստեղ: Չեք կարող պատկերացնել, թե որքան մեծ է մեր ցանկությունը փոխադարձելու Զերդ եղբայրական վերաբերմունքը նման ազնիվ ժեատերով: Զեզ ծանոթ է անշուշտ էկումենիկ շարժմանը վերաբերող այն պատգամը, որ Սրբազն Պապն ուղեց ամբողջ աշխարհի հավատացյալներին: Այդ պատգամի մեջ Նորին Սրբությունն ասում էր, որ ամեն անգամ, եւք ձեր եկեղեցու կամ օրթոդոքս այլ եկեղեցիների եպիսկոպոսներ դիմեն կաթողիկե եկեղեցու եպիսկոպոսներին նմանօրինակ խորիդակատարությունների համար, մեր եկեղեցիները կդրվեն ձեր տրամադրության տակ: Նմանապես, ամեն անգամ, երբ ձեր եպիսկոպոսներից խնդրեն քահանացա-

կան որևէ ծառայություն, մեր քահանաները նույնական կլինեն Ձեր տրամադրության տակ: Եվ այս՝ միշտ պամեղով ձեր համոզմունքների, ձեր համեմացողությունների և ձեր եկեղեցու ավանդությունների նկատմամբ հարգանքի ամենախոր գագաղումը:

Ես կցանկանայի այս առթիվ մի վերջին կետ ևս ավելացնել իմ խոսքերի վրա: Ձերդ Սրբություն, պրապուս մյուոսնի օրինության հանդիսավոր արարողության ավարտից հետո Ձեր խոսած սքանչելի ճառում Դուք ասացիք, թն աշխարհի խաղաղության և ժողովորդերի միջև եղբայրական կապի հաստատման գործում որքան մեծ է Քրիստոսի եկեղեցու պատասխանառությունը: Ի ներկայության ձեր եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների և պետական պաշտոնական անձնապորտյանց, թույլ տվեք ինձ հայր Դիուքրեի հետ, որպես հոգևորական կաթողիկե եկեղեցու պաշտոնական ներկայացուցիչներ, նշելու, թե որքան համաձայն ենք Ձեր այդ տեսակետին:

Եկեղեցին, քարոզելով Ավետարանը և քարոզելով Քրիստոսին, ամսայնանորեն հաստատում է խաղաղությունը երկրի վրա: Եվ իզուր չէ, որ մեր եկեղեցիներում, պաշտամունքի ժամանակ, երգում ենք հրեշտակների հատված երգը. «Փառք ի բարձուն Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ձերդ Սրբություն, վաղը մենք կվերադառնանք Հոռու: Մենք շատ երջանիկ ենք, որ մեզ հետ տանում ենք և հաճուքով մեզ ուղարկողին ենք ներկայացնելու ձեր եկեղեցու նկատմամբ ձեր ժողովորդի զավակների ունեցած խոր հավատքի բացառիկ պատկերը և այն չերմ հյուրասիրությունը, որ որոշմկած է մեր արտերում: Թույլ տվեք, որ այս առթիվ Սրբազն Պապի անունց Ձեզ հանձնեն այս համեստ նվերը, որը ներկայացնում է Նրա քահանապետության երեք հանգրվանները»:

Հանդիսությանը ներկա էր նաև, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կողմից, դոկտ. Լոկաս Վիշերը, որն իր ողջունի խոսքի մեջ ասաց.

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆԱՐԴԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱԻԱՏՈՅ ԵՒ ԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏՆՈՐԵՆ ԴՈԿՏ. ԼՈԿԱՍ ՎԻՇԵՐԻ ԵԼՈՒՅԹԸ

«Ձերդ Սրբություն, սիրելի եղբայրներ և քույրեր,

Ինձ համար մեծ ուրախություն և բացառիկ պատիվ է այս հանդիսավոր հավաքույթին խոսք առնել Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անունից: Նրա մեծարգությունը դոկտ. Մ. Թոմասը և դոկտ. Է. Բլեյկը, պաշտոնապես հանձնարարել են ինձ հայտնելու Ձեզ, թե իրենք իրենց արտով ու խոհերով Ձեզ հետ են այսօր և մասնակցում են այս ուրախ հավաքույթին: Նրանք արտագին ու չերմ ողջունեն են հաղորդում Ձեզ, որպես Հայաստանաց նկեղեցու գերագույն պետի, և համոզված են, որ Եկեղեցիների եղբայրական գործակցությունը մեծապես կախում ունի այն պետերից, որոնք գիտեն իրենց նկեղեցիներն առաջնորդել դեպի Քրիստոս: Նրանք ողջունում են ուրեմն Ձեզ խորին երախտագիտությամբ այն բոլորի համար, որ Դուք արել եք ի նախատ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, և արտահայտում են այն նույսը, որ Դուք այսուհետև էլ դեռ երկար ժամանակ ի վիճակի կլինեք շարունակելու Ձեր այդ գործունեությունը ի սեր Քրիստոսի:

Քիչ առաջ, իմ եղույթի սկզբում, խոսք ուղղելով ներկաներին, ևս հասուն դիտավորությամբ է, որ օգտագործեցի եղբայրներ և քույրեր բառերը. նիդավի, այն օրից, ինչ այստեղ ենք գտնվում, այն տպավորության տակ ենք,

թե ներկա ենք լինում ընտանեկան մի տոնախմբության: Մի մեծ ընտանիք, համախմբված իր հոր շուրջ և նրա միջոցով, ավելի խոր իմաստով, մեր երկնավոր Հոր շուրջ, որը Քրիստոսով հայտնվեց մարդկությանը: Հակառակ նրան, որ մենք հայ չենք ու զգիտենք հայոց լեզուն, սակայն այն գգացումն ունենք, թե մենք ևս մաս ենք կազմում այս ընտանիքին, թերևս որպես որդեգիրներ: Այս գգացումներն ու բարեմաղթություններն արտահայտելով, ևս կցանկանայի հիշեցնել ձեզ, որ բոլոր էլ պատկանում ենք առավել լայն մի ընտանիքի, քանի որ Քրիստոսով բոլոր քրիստոնյաները կազմում են ընդհանրական մի մեծ ընտանիք: Եվ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդն որիշ բան չի ուզում, բայց եթե արտահայտել այն կապը, որ մեզ բոլորս միացնում է միմյանց: Նա պարզապես մի բաց գրասենյակ չէ Ժնևում, այլ հավաքական մի ճիգ՝ ցոյց տալու աշխարհին, թե մենք բոլորս մեկ համայնք ենք, այս բարի հսկական իմաստով: Եվ որպեսզի ձեզ խոտուն մեկ պալցույցը տամ մեր այդ ճգոտումի, ուզում եմ հայտնել ձեզ, որ մենք Ժնևում ամեն առավոտ հավաքվում ենք աղոթելու մեր կազմակերպության անդամ յուրաքանչյուր եկեղեցու համար: Մենք աղոթում ենք նաև ձեր եկեղեցու համար և բոլոր այն եկեղեցների, որոնք ներկայացված են պատեղ այս հանդիսությունների առիթով: Այս ձևով է, որ մենք մեր մտքերում մշտապես կենդանի ենք պահում բոլոր անդամ եկեղեցների հետ մեր կապը, ապրում ենք նրանց կյանքով, հրճվում նրանց հաղթանակներով և ցալում նրանց տկարությունների համար:

Այս առթիվ ես կցանկանայի հայտնել նաև բոլորի, որ այն օրից, երբ Նորին Սրբությունն այցելեց Ժնև, մեր եկեղեցու խորանի վրա գտնվում է հայկական մի խաչ, որը թերևս լավագույն խորհրդանշին է մեր մտքերուն վատ պահելու ձեր եկեղեցու ներկայությունը: Մենք շատ երշանիկ ենք, որ մեր միջև հաստատված կապերը օրավոր խորանում են: Եվ հենց այս իմաստով մենք մեծապես ուրախ ենք, որ վերջերս հայկական մի եկեղեցու բացումն ու օծումը կատարվեց Ժնևում: Դա ձեր եկեղեցու հավատքի կենսունակության լավագույն գրավականն է: Մենք վստահ ենք, որ մեր կենսորունում այդ եկեղեցու ներկայությունը հետագայում դրական արդյունքներ պիտի ունենա: Այսպես, որենքն, բոլոր տարրերը միացած են, որպեսզի մեր հարաբերություններն այսուհետև առավել ամրապնդվեն: Ահա այս լավատեսությամբ է, որ ես կցանկանայի ողջունել Ձեզ այս երեկո և հայտնել այն համոզումը, թե քրիստոնյաների միությունը պիտի աճի ու զորան: Այդ միությունն ընդունակ է հայութանարելու և վերացնելու ամեն սահման: ոչ միայն այն սահմանները, որ բաժանում են վարդապետություններս իրարից, այլ նաև այն սահմանները, որ բաժանում են մարդուն իր նմանից: Մենք բոլորս անհստիր կոչված ենք տալու այս վկայությունը, որովհետև հայթական Քրիստոն է, որ մեզ ասում է, թե պետք է այսպես վկայել:

Սրտագին հնչեց նաև հանդիսության ժամանակ վերապատվելի Մեռեք-րիմ Սուլահիանի ողջույնի խոսքը.

ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ Ս. ՍՈՒԼԱՀՅԱՆԻ ԽՈՍՔԸ
ՀԱՆՈՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅ
ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«Վեհափառ և առավելապես սիրված ու սիրելի Հայրապետ,
Այսօր մեր նոս ներկայությունը պատմական արժեք ունեցող անզուգական առիթ մըն է:

Այս օրերուն անտարակուս Վեհափառը գրադաւած էր հազար ու մեկ գործերով, այս լուրջ ժողովներուն և կարգադրությանց ետևեւ ըլլալով: Եվ տական նորին Սրբությունը Դր քազու աշխատանքներու մեջ նրբությունը, ազնվությունը ունեցավ չմոռնալ փոքրիկ եկեղեցի մը:

Մենք հայերս կոչված ենք փոքր ածու, իսկ մենք ավետարանականերս՝ փոքր ածուին ավելի ևս փոքր մեկ մասնիկն ենք միայն: Եվ այս շատ համեստ եկեղեցին իր ուշադրության հանդիպելով նա ցույց տվալ Դր մեծությունը, որուն մեր հարգանքը կմատուցանենք:

Երբ որ Վեհափառին հրավերը եկավ մեզի, ինչպես ժողովուրդ մը իր թագավորին խնդրանքը որպես հրաման կառնե, մենք այդ հրավերը ընդունեցինք որպես հրաման: Եվ սակայն այդ հրամանը անձամբ մեզի համար պատիվ և հաճուք մը եղավ: Մենք ուրախությամբ եկանք հոս, եկանք այս զգացունով, ինչպես որ մանուկ մը կուգա իր մեծ հորը և կընդունի: Այս մեր բոլոր պատկանելի հյուրերը հոս են որպես քույր եկեղեցիներ: Մենք հոս ենք որպես որդի եկեղեցի: Հայատանիայց եկեղեցին կոչված է Մայր եկեղեցի: Մայր եթե զավակներ չունենա՝ մայր չի կրնար կոչվի: Դուք Մայր եկեղեցի եք, քանի որ մենք ձեր զավակներն ենք:

Հյուսիսային Ամերիկայի և Կանադայի մեջ ունինք մոտ 25 եկեղեցիներ: Եվ քանի որ չեմ տեսներ Ամերկայացուցիները աշխարհի մյուս կողմերն հայ ավետարանական եկեղեցվույն, միգուցե արտոնվի ինձի խոսիլ նաև անոնց անունով ալ:

Ասիկա մեզի համար մեծ պատիվ մըն է: Մենք երկար ատենեն ի վեր Էկումենիկ շարժման տեղյակ և փափագող եղած ենք, որ մենք ալ մեր մոտիկրթունը ունենանք: Ես անձամբ համոզված եմ, որ մեր ներկա Վեհափառ Հայրապետը ապրող ըլլար 1840-ական թվականներուն, հայոց մեջ ավետարանական զատ եկեղեցի մը գոյություն չէր ունենար: Ես համոզված եմ նաև, որ մեր ներկա Հայրապետին իմաստուն, խոթեն, լայնախոն և մանավանդ քիստոսափառ, ազնիվ, սիրալիր նկարագրով ու կյանքով մոտ ապագային մեր բաժանումները ավելի ևս պիտի իշնան և մեր հարաբերությունները ավելի ևս պիտի սերտանան:

Մենք այս բոպեին համար չափազանց ուրախ և երջանիկ ենք՝ երկու պատճառներով: Նախ եկանք և խնջուք ունեցանք հոգեկան այսքան բարձրաստիճան հոգնորականներու, կղերականներու, եպիսկոպոսներու, արքեպիսկոպոսներու, վարդապետներու և քահանաներու ներկայության, հոգեկան խնջուք ունենալ և վայելը ունենալ, և սուրբ Էջմիածինը տեսնել մեզի համար հոգեկան մեծ ներշնչում մըն է: Ասիկա նույնքան մերն է, որքան ձերը, և մենք այդ ներկայության մեջ ոգևորվեցանք և ներշնչվեցանք:

Իսկ երկրորդ հաճուքը ալ եղավ, որ մենք որ դժբախտությունը ունեցած լինք ձեզմէ շատերուն նման՝ հայ հողեն դորս ծնիլ և մեծնալ և նույնիսկ այս տարիին հասնիլ առանց հայրենիքը տեսած ըլլալու և տարիներով դպրոցներու և սուներու մեջ «ա՞ն Հայատան» երգեր ենք, «քեզ տեսնեմ ու մեռնիմ» երգեր ենք, վերջապես այս առիթը տվալ ինձի գալ մայր հողը, համբուրն զայն կարոտով, և ուրախության արցունք թափել:

Մեզի համար անզուգական հաճուք մըն է տեսնել ոստիկաններ և զիտնալ, որ անոնք հայ են, տեսնել պաշտոնյաներ, որպես ունինք մեր մեջ հատ մը այսօր, բարձրաստիճան պաշտոնյաներ և գիտնալ, թե անոնք հայ են, մտնել կառավարական սուներ և գիտնալ, որ անոնք հայ կառավարության սուներ են, մտնել նամակասուն մը և գիտնալ, թե գործողները հայեր են,

մտնել թանգարան մը և գիտնալ, թե այնուելի թանկարժեք իրերը հայկական արժեքավոր բաներ են, և վերջապես անխստիր որևէ մեկու և ըսել՝ «Բարեն եղալու» և անկե լսել «Աստուծու բարի» պատասխանը,—ասիկա մեզի համար խնկապես մեծ արժեք մըն է: Ուստի ես, Վեհափառ Հայրապետ, հանուն ավետարանական եկեղեցվոյն, նաև մեր շնորհակալությունը կուզեմ հայտնել Զեզի՝ Ձեր բարեհաճ և ազնիվ հրավերին համար: Մեր խորին շնորհակալությունը հայտնել Զեզի՝ մեր վայելած Ձեր և այս երկրին ազնիվ հյուրասիրության համար և, մասնավանդ, այն ազնիվ վերաբերմունքին համար, որ թե՛ Դուք և թե՛ Ձեր բարձրաստիճան հոգևորականները ցուց տվին թե՛ վերապատվելի Մելիտոնյանի և հինձի՝ մեր հոս գտնված օրերուն առջիվ: Մենք պիտի վերադառնաք և ըսենք, թե մեր սիրելի մայր հողին վրա մեզի սիրող սիրելի Հայրիկ մը ունինք, և Անիկա նր աղոթքներուն մեջ կիրշե մեզի, և մենք ալ պիտի շարունակենք աղոթել, որ բարին Աստված շարունակե օրինել Զեզ և Ձեր օրինությունը հոյն մեր համայն ծողովորդին աշխարհին չորս ծագերուն ցրված: Մենք ալ որդիական հարգանքի և սիրո որպես արտահայտություն կրտսանք փոքրիկ նվեր մը Զեզի և կիսնորենք, որ ընդունիք զայն մեր հայ ավետարանական եկեղեցին անունով»:

Ս. ԹՈՐԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

«Վեհափառ Տեր,

Ամերիկայի Միացյալ Նահանգաց և Կանադայի մեծ քաղաքներուն ու ավաններուն մեջ բնակող Ձեր զավակներեն, և վասն հավատքի ու ինքնապահանության զինվորյալ հայորդիներեն, Ձերդ Սրբության կրերենք բոլորին ամխատն սիրո, և որդիական հարգանքի չերմ զգացումները:

Սույն երախտագետ զգացումներուն ցուցիչներ և վկաներ միայն կնկատենք Հայց. եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմեն մեզի հետ ներկայությունը առաջնորդի փոխանորդ Վազգեն եպիսկոպոսի, և Կանադայի Շրանի մեջ առաջնորդի փոխանորդ Վաչեն եպիսկոպոսի, նաև՝ Վաշինգտոն մայրաքաղաքի մեջ ներկայացուցիչ Բարգեն եպիսկոպոսի, և այլ հոգևոր հայրերու և ավելի քան երկու հարյուր պատվական ազգայիններու:

Ասոնք բոլորը, և մեր թեմի ստվար թիվով հոտը Վեհիդ, իրենք զիրենք ավելի զորացած կզգան՝ Ձերդ Սրբության երկից շնորհած օրինաբեր այցերով, և Նյու-Յորքի մեջ սուրբ Վարդան Մայր տաճարի օծնան հանդիսությանց առիթով թողած անմոռանայի հիշատակներով: Ամոնք կլսեն տակալին Վեհիդ ձայնը, քաղցրահոնչ և առաքելաբանգ, որ իրենց կիաներ այնպես վեհաշունչ ու զնգուն, ինչպես Սրբան ու Զանգուն, և մյուս գետերը հայոց աշխարհնեն, որոնք ձայներն են իրենց պապերուն՝ երեսուն դարերու երկայնքին: Են այդ ձայնի արձագանքեն, և անոր ազդեցությամբ, ավելի հատակ կիրշեն Ձերդ Սրբության մեծ անձը և Քրիստոսի Ավետարանի ոգիով պատգամները և նորդուրսկանները՝ հայաշունչ ու հարազատ, իմաստուն և լավատես:

Վեհափառ Տեր, պատմությունը՝ մեր ոշադրության և խնամքին համապատասխան և ամերիկացին Ձեր զավակներուն, և աշխարհացրին որդիները հայոց ազգին, կիավատան որ պատմությունը անգամ մը ևս ինքնինք կրկնեց նախամատական վայելչությամբ:

Տերը Եգիպտոսեն կանչեց շնորյալ զավակը խրապելացիներուն:

Մեր հայրերուն Աստվածը՝ և Գրիգոր Լուսավորչի գահին վրայեն սուզը վերացնելու համար, զՁե՛զ կանչեց հեռավոր ռուսեն հողեն:

Եվ այդ կանչը կհասներ համայն հայության այն ժամանակ, երբ չորս տասնյակ և յոթ արևոտ ու ամպու գարուններ էին անցած կյանքեն այն մասովին, որ լուսին էր բացած իր աշքերը, բարեպաշտ այլ համեստ հայ ընտանիքի մը հարկին տակ՝ աշնան օր մը բախտավոր:

Ու նոյն պատահին, գրաւելահին հակած մյուռնադրոշմ իր ճակատը, հաջողեր այսի ապահովել հաստատագիր վկայությունը իր ուսումներուն մինչև համալսարան: Եվ այդ նվաճումներուն հետ, ան պիտի մնար առողջ ու կենսունակ, խիզախ ու կորովի, շնորհիվ տարիներով իր ստացած մարմնակրթության և սկսուտական ոգիին:

Գիտեն նաև մեզմեն շատեր, որ ծառայության և նվիրումի մեջ մարզված երիտասարդը, իր մտքին ու հոգիին դարպասները բացած հայ և համաշխային արվեստներու և մատյաններու, պիտի գրեր ու խոսեր, ուսուցաներ ու դեկավարեր համար հարատևությամբ, քաղցրուն բաժնելով տղոց ու մեծերուն, հասարակության ու մտածումի ատակ անձերուն՝ իր ներշնչումներեն ու դատումներեն, մայրենի լեզվով և օտարին լեզվով, փառարանելով արժեքները հայկական ժառանգություններուն:

Ու տարիները պիտի կամրջեն անոր ճամփան ափյուռքն դեպի հայրենիք ու հայ հավատքի հնադարյան կեդրոն սուրբ Էջմիածին:

Ս. պիտի ըլլար մեկը հայ եկեղեցվո հոգնորականներեն, իր ծնունդին երեսունսինգամյակը բոլորեկեն տասը օր հետո: Ըլլար պիտի վարդապետ ու եպիսկոպոս, ըլլար առաջնորդ և բանիրուն քարոզիչ:

Զգալապես ներշնչվելով հիշատակեն ու գործեն Հայոց Հայրիկին, Խրիմյան Հայրապետին՝ ըլլար պիտի անոր նման դաստիարակ մը հայ ժողովուրդին, և արմատանար պիտի իր մեջ այն համոզումը, թե ժողովուրդներ, դաստիարակվելով, պիտի կարենային միասին ողջունել ամեն ծագող առավոտ, եղայրորեն մշակելով Սատուծն իրենց պարգևակած հողը, միասին վայելելով անոր բարիքները:

Բոլոր հայ մեծերուն պես՝ ան հիացավ «հայ ժողովուրդի ապրելու հավատքին, տոկալու ուժին, զոհաբերելու ոգիին»: Եվ որպահացավ անհունորեն՝ տեսնելով այդ ոգիին ստեղծած բարիքները հայրենի երկրին ու արտաշխարհի մեջ:

Իր մեջ բյուրաղեցավ այն համոզումը, թե սուրբ Էջմիածինը կենդանի իրականություն մըն է այսօր, շողշողուն լուսը մեր հավատքին, անշեշ փարուսը մեր հոգնոր լուսավորության, աստվածապարգև ճանապարհը մեր հոգիներու փրկության և միաժամանակ հարազատ օջախը ջերմ հայրենասիրության:

Եվ այդ հայրենասիրությունը արտահայտվեցավ այսպես՝

«Արովյանի վրա եմ: Շուրջս անհամար անցորդներ, իմնդ ու ծիծաղ, առատ լուսի ջերմություն: Ժայտալի հայացքներ զիս կողշունեն անձայն: Հայկական խորունկ աշքեր, կենդանի, վառ աշքեր, հյուրընկալ աշքեր: Կքալեմ կարծես երազի մեջ: Կկոյսես փողոցի քարերուն վրա: Ամեն մեկ քարեն սիրտս կքաղէ հուզում: Այստեղ ամեն ինչ կշնչե, կշարժի: Շենքերը, ծառերը, մարդոց աշքերը, երկինքի կապույտ հոգիին կխոսին քաղցր ու մտերիմ բարրախը մը, որ ջերմ հոսանքի մը նման կանցնի գգայարանքներուն մեջ, ծաղիկ ու երգ սիրելով: Աշխարհն ամրող շորջպար է բռնած: Պատրանք թե իրականություն: Եվ որպես գերագույն ստուգություն, հայացք Մասիսը կինուրն...»:

Եվ իր կյանքի անհմանալի ու խորհրդալի մեկ պահուն, աստվածային հախախնամությամբ, ազգին անունով համայնական ձայն մը՝ հայրենիքնեն, ավետեց լորր բարի՝ թէ Հայց. եկեղեցվոյ ազգային-եկեղեցական ժողովը ազգընտիր Հայրապետ հայտարարեց, հեռավոր կայքերեն կանչված ու ընտրյալ գավակը ազգին:

Ու ցնծացին սրտերը հայոց, իրենց շրթներուն անունը Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Ս. Օծություն Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսին:

Հրճվեցան, և «Էջ Միածինն ի Հօրէ» ցնծերգեցին Միացյալ Նահանգաց և Կանադայի մեջ հաստատված գավակները Հայաստանյաց եկեղեցին:

Վեհափառ Տեր, մեր ազգն ամբողջ, հակառակ կարգ մը տխուր իրադարձությանց, հրճվեցավ նետնելով տասնչորս տարիներու շրջանին Վեհիդ ձեռք րերած իրագործումներուն, որոնք կարելի դարձան հայ բարերարներու իշխանական նվիրատվությամբ, և մանավանդ շնորհիվ հայրենի պետության ընծայած դյուրությանց և բարյացակամության:

Եվ այսօր, Վեհափառ Հայրապետ, Ձերդ Սրբության վաթունամյակի նամազգային հանդիսադրության այս բարեպատեն առիթով, Ձեզի կրերենք նեռավոր բայց հայրենակարոտ և իր պատմության հավատարիմ մեր ժողովորդի սիրո և նվիրումի ոխտը:

Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի թեմական ժողովի, թեմական խորհուրդի և կազմակերպությանց անունով Ձերդ Սրբության կմադթենք արևատ տարիներ և առավել իրագործումներ, շինարար Հայրապետիդ կյանքը նվիրագործելու համար Լուսավորչի կանեթեղի մշտական ու «պայծառ աչքին» ներքեւ, հայրենի աշխարհի և Հայց. եկեղեցվոյ բարգավաճումին և Աստուծո փառքին համար:

Ձեր արևը կենսաբեր և Ձեր կյանքը օրինված թող լինի միշտ, Վեհափառ Հայրապետ»:

Անգիայի հայոց հայրապետական պատվիրակ տ. Պատկ արքեպ. Թումայանը, հանուն Քենտրքերի արքեպիսկոպոսի, ողջունում է Հայոց Հայրապետին նետնյալ երույթով.

Ի ԴԻՄԱՑ ՔԵՆՏՐԲԵՐԻՒԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ՝

Տ. ՊԱՏԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

«Վեհափառ Տեր,

Այն պարտականությունը՝ որուն ակնարկեց ամեն. տ. Շնորհք պատիհարքը կատարելե առաջ, ներեցեք, որ Ձեր Ս. Օծությանը ներկայացնեմ մեր համայնքին որդիական սերը դեպի Ձեր անձը և իրենց հավատարմությունը՝ դեպի ս. Էջմիածինը՝ մաղթելով, որ մեր Մայր Աթոռը հաստատուն մնա հավիտյան հավիտենից և Աստված Ձեզի պարգևնե երկար և խաղաղ արևշատություն։

Վեհափառ Տեր, Ձեզի կրերեն ողջույնները անգլիկան եկեղեցվոյ պետի՝ Քենտրքերի արքեպիսկոպոսի՝ դոկտ. Մայքլ Ռեմզիին։ Ծանոթ է Ձերդ Սրբության՝ դարուս Ավիգրեն ի վեր ասենասերտ հարաբերություններ կմըշակվին անգլիկան և Հայաստանյաց եկեղեցիներու միջն։ Այդ բարեկամության առաջին նշաններեն մեկն է Երուսաղեմի անգլիկան եպիսկոպոսին կամ արքեպիսկոպոսին մասնակցությունը մեր Ոտնալվայի արարողության, Սրբոց Հակոբյանց տաճարին մեջ, Ավագ հինգաբրթի օր։ Այս բարեկամական կապե-

թթ կշարունակվին դարուս սկիզբեն ի վեր, բայց Զերդ Ս. Օծության այցելությունը 1956 թ. Քենտրոնի արքեպիսկոպոսին՝ դոկտ. Ֆիշերին, Զեր բնակչությունը Լամբեթ պալատը, մեր այս բարեկամությունը հասցնած է իր բարձրակետին: Մասնավանդ Զերդ Ս. Օծությունը և դոկտ. Ֆիշեր միասին ալյոնեցիք մեր սուրբ եկեղեցուն մեջ Աշխարհամատրան կիրակին, որ այնքան բարեդապ առիթ մըն էր:

Այնունետև Զեր գովա այցելությունները, 1963-ին և 1965-ին, ստեղծած նու սեր և համակրանք անգլիկաններու կողմէն դեսի Զեր սիրեալ և համակրելի անձնավորությունը: Են մոռնար Քենտրոնի նախկին արքեպիսկոպոսի խոսքը, որ ամեն անգամ կրկներ և ինձի, թէ՝ «այնքան սիրած եմ ձեր կաթողիկոսը, որ սիրահարված եմ»:

Վեհափառ Տեր, թույլ տվեք, որ հանուն Քենտրոնի արքեպիսկոպոսի և իր եկեղեցվոյն և իր եկեղեցականներուն, որոնք կայրեն մեր եկեղեցին, իրենց ամենուն ողջունը Զեզի հայտնելե հետո, Նորին Գերապատվորյան կողմէն Զեզի կնվիրե այս սկիբը՝ ի նշան իր բարեկամության և իր քրիստոնեական սիրո եղբայրության:

Կուգեմ այս առժիվ հայտարարել, որ մեր համայնքի անդամներեն տիար Հարություն Մութաֆյան ի նշան Զեր անձին հանդեպ ունեցած իր համակրության, նաև Մայր Աթոռի նկատմամբ ունեցած իր հավատարմության, հանձն կատնել վարդապետ աշակերտի մը երեք տարվա ամեն ծախտը ընդունիլ և կամ Անգլիա որևէ մեկ համալսարանին մեջ, որպեսզի ան աստվածաբանական ուսուցումն զատ, տիրե նաև կատարյալ անգերենին»:

Հանդիսության ժամանակ Հայոց Հայրապետի ծննդյան 60-ամյակը և գահակալության 14-ամյակը, հանուն ԱՄՆ-ի հայ երիտասարդաց եկեղեցաւեր կազմակերպության, ջերմորեն և որդիական անկեղծ երախտագիտությամբ ողջունում են Կարո Զամանիկյանը և Արամ Նորսիկյանը՝ մատուցելով նաև իրենց նվերը:

Արամ Նորսիկյանը, հանուն ԱՄՆ-ի հայ երիտասարդաց եկեղեցաւեր կազմակերպության, ողջունի խոսքի մեջ ասաց հետևյալը.

ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐԱՄ ՆՈՐՍԻԿՅԱՆԻ ՈՂՋՈՒՆԻ ԽՈՍՔԸ

«Ամերիկայի Հայատանյաց եկեղեցվո երիտասարդաց կազմակերպության կերպնական խորհուրդի կողմէն խորին շնորհակալություն կհայտնենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որ մասնավոր հրավեր ուղարկեց մեզի, ներկա գտնվելու իր ծննդյան 60-ամյակին և գահակալության տասնչորդ տարեդարձի հանդիսությանց: Մենք պարտք և պատիվ համարեցինք մասնակցելու այս աննախընթաց սուներուն, և ուրախ ենք հայտնելու որ կերպնական խորհուրդիս կազմի ութը անդամներեն, չորսս ներկա ենք պայօք այստեղ:

Ուստի, հանուն Ամերիկայի Հայատանյաց եկեղեցվո երիտասարդաց կազմակերպության կերպնական խորհուրդին, քառասուն մասնաճյուղերուն, և բովանդակ անդամներուն, կշնորհավորենք Զերդ Վեհափառության ծննդյան 60-ամյակը, և գահակալության տասնորրորդ տարեդարձը: Կմաղթենք Զեզ առողջ, երջանիկ և արևշատ օրեր, որպեսզի կարենաք շարունակել և հառաջ տանիլ մեր ազգային-եկեղեցական ղեկավարությունը: Հայատան-

յայց եկեղեցին և հայ ժողովորդը բախտավոր են Զեզի նման Հայրապետ մը ունենալուն:

Կազմակերպության անդամները կճանշնան Ամենայն Հայոց կաթողիկոսը և Մայր Աթոռ ու Հջմիածինը իբրև Հայաստանյաց եկեղեցվոր ընդհանուր և բարձրագույն իշխանությունն ու նեղինակությունը: Նաև, վատահ ենք և տարակուս չունինք որ Դուք ազդու կերպով պիտի շարունակեք առաջնորդել, մեր եկեղեցին և ժողովորդը, ոչ թե միայն Հայաստանի մեջ, այլ ի այլուր աշխարհի, ծառապելով ի փառ Աստուծուն և հօգուտ հայ ազգին:

Սիրելի Վեհափառ Տեր, Ձեր անձը, Ձեր անունը, և Ձեր գործը կտորիը դաշնակության հեռավոր Ամերիկայի Ձեր երիտասարդ զավակներուն համար, հայ կրոնքը, հայ ազգը և հայուն հոգին:

Կիհշենք անահման սերը և եռուգեռը ամերիկահայ երիտասարդության սրտին մեջ 1968-ին, երբ իմացանքը որ մեր Վեհափառ Հայրապետը Իր Ամերիկա կատարած օրինաքեր այցելության առթիվ, փափագ հայտնած էր առանձին տեսակցելու և ծանոթանալու Ամերիկայի հայ երիտասարդության հետ: Ուստի, Ամերիկայի Հայաստանյաց եկեղեցվոր երիտասարդությաց կազմակերպությունը հայսաձեռնեց շրջանային երիտասարդաց համախմբումներ:

Խոստովանենք որ Վեհափառ Հայրապետի ստեղծած խանդած խանդավառություններն էին որ՝ մեզ մղեցին նոր եռանդով և թափով հառաջ տանի մեր կազմակերպության գործունեությունները:

Վեհափառ Հայրապետի հայրական հորդորները, իմաստուն և խոհսական խոպքերը, սիրո զգացումները, հոգևոր և ազգային ներշնչումներ էին մեզ համար, և խթան եղան ամրացնելու կապը հեռավոր Ամերիկայի հայ երիտասարդության սուրբ Հջմիածնի և Մայր Հայաստանի միջև:

Առաջնորդվելով Վեհափառ Հայրապետի հորդորներով, նոր լուսով և աշխատանքով կփորձենք իրագործել մեր կազմակերպության նպատակը: Ինչպես շատերուդ ծանոթ է, Ամերիկայի Հայաստանյաց եկեղեցվոր երիտասարդաց կազմակերպության բուն նպատակն է ոչ թե միայն պահպանել մեր ազգային եկեղեցական ծառանգությունը, այլ ավելի ապրիլ Հայաստանյաց եկեղեցվոր հավատքին համաձայն, ծանոթացնել հայ մշակույթը ամերիկահայ երիտասարդության և միևնույն ժամանակ՝ կապել հայ երիտասարդությունը մեր Մայր եկեղեցվուն:

Աչքերնիս հառած ենք և հոյսերնիս դրած ենք մեր Մայր Աթոռ ու. Հջմիածնի և իր արժանընտիր գահակալին վրա, որ հոգևոր և ազգային ուղղություն տան մեջի: Եվ այսօր, մենք մեր թանկագին ու. Հջմիածնի մեջ, մեր հայսահայրերու վերածնած և ծաղկուն հայրենիքի հողին վրա, կվերանորոգենք Ամերիկայի Հայաստանյաց եկեղեցվոր երիտասարդաց կազմակերպության անդամներու սերը և հավատարմությունը հանդեպ Մայր Աթոռ ու. Հջմիածնի և մեր աննման Վեհափառ Հայրապետին:

Միայն այս միջոցավ է որ կրնանք հասնի մեր ամենաբարձր նպատակներուն, որ է ծառապել ի փառ Աստուծուն, ի պայծառության Հայաստանյաց առաքելական եկեղեցվոր, և ի զարգացուն հայ մշակություն:

Մեր սրտագին փափագն է, Վեհափառ Տեր, որ Դուք երկար տարիներ առողջ և արևշատ օրերով հովեք Ձեր հոտին ամենուրեք, և կարող ըլլաք Ձեր հովանակին տակ մշտնշնապես պահելու հայ եկեղեցվոր դարավոր սրբությունները»:

Ծուրջ երեք ժամ տևող հորելյանական սույն հանդիսության ժամանակ խանդակառ արտահայտությունների մեջ խոսք է առնում նաև Հայոց հորելյար

Հայրապետը, որին ողջ դահլիճը խոտնկայս ողջունում է սրտագին ծափերով ու երախտագետ զգացմունքներով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԻՐ ՇՆՍԴՅԱՆ
60-ԱՄՅԱԿԻ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 14-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

«Տէր եթէ զշրջունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»:

Գուցե ճիշտ և ուղիղ պիտի ըլլար, որ այս երեկո իմ խոսքը այս աղոթքով սկսեր և վերջանար: Սակայն մարդկային պայմաններ հատուկ պարագաներ, կպարտավորեցնեն զիս որպեսզի այնուամենայնիվ երկու խոսք բերեմ ձեզի:

Խորապես զգացված եմ անշուշտ այն բոլոր խոսքերեն, եղբայրական և քաղցր, այն բոլոր հարազատ ու սիրալիի արտահայտություններեն, որուն առատապես բաշխվեցան այս երեկո, և որոնք կուղղվեին Մեր համեստ անձին և այն աշխատանքին, որ կատարվեցավ Մեր գահակալության 14 տարեաներու ընթացքին: Մենք միսիթարված ենք, մասնավորապես որ մեր և եկեղեցին նվիրապետական երկու Աթոռներու գահականները, մեր թեմակալ ու ուղնորդներու մետ միասին կատնավին Մեր շուրջ, ինչպես և մեր քոյր եկեղեցիներու բարձրաստիճան ներկայացուցիչները՝ հոգունեական կաթոլիկ եկեղեցու, ոուս պրավոլավ եկեղեցու, վրացական օրթոստրու եկեղեցու, Եկեղեցիներու համաշխարհային խորհրդի և Միացյալ Նահանգաց հայ ավանարանական համայնքներու: Աստվածահան բացառիկ երևոյթ մըն է այս մեր կյանքին մեջ: Բարի նշաններեն մեկը մեր ժամանակներուն, երբ դարավոր պատմություն ունեցող եկեղեցիներ իրենց կյանքի ճանապարհին իրարու կիանդիային Քրիստոսի անունով և եղբայրության անունով: Եղբայրություն, որ թե՛ քրիստոնեական և թե՛ համաշխարհային իդեալը կհանդիսանա արդի աշխարհի խղճին առջև:

Հոգևոր ուրախությամբ լսեցինք շնորհավորական սիրո խոսքերը Ն. Ս. Պավլոս Զ. Պատի, Ն. Ս. Ալեքսի ոուսաց պրավոլավ եկեղեցու Պատրիարքի և Ն. Ս. Եփրեմ Բ վրաց եկեղեցու կաթողիկոսին և պետք է ցանկայի, կամենայի որ այս եկեղեցիներու բարձրաստիճան հոգուորականները, որ այստեղ կատնավին իրենց վերադարձին իրենց հետ տանին Մեր նույնքան անկեղծ, եղբայրական սիրո արտահայտությունները և մեր ողջագուրումը:

Թող Աստված օրինե միջեկեղեցական քրիստոնեական եղբայրության համաշխարհային շարժումը և քայլ առ քայլ բոլոր մեկ մոտենանք իրականացնելու Աստուծո կամքը երկրի վրա: Եվ, եթե մենք մեղավորներս այս պահուն, արծանի պիտի ըլլանք, որ հավիտենականության աշխարհեն մեր Տերը և Փրկիչը պահ մը գոնե նր հայացքը մեզի ուղղե, վստան ենք, որ Անոր պիտի պատճառնեք ուրախություն: Երանի թե այդպես ըլլար:

Համենայն դեպս, Մենք, որպես Հայաստանյաց եկեղեցու առաջին սպասավոր, կխոստովանինք թե ցարդ Մեր իրագործածը այս ճանապարհի վրա տակավին թիշ է և անբավարար, ոյովինուն Մեր ուժերը տակավին տկար են և Մենք տակավին երկշու: Բայց հույս ունինք, թե ճիշտ այսպես կողք-կողքի գտնվելով պիտի կարողանանք ավելի զորանալ և նորանոր հաջողություններ արձանագրել մեր եղբայրության և Քրիստոսի սիրով միության իրագործման աստվածահան ճանապարհին վրա:

Այստեղ շատ խոսկեցավ տասնչորս տարիներու Մեր գործունեության մասին: Կեղծ համեստությամբ մը չենք ուզեր անշուշտ ժխտել, թե որոշ հաջողություններ արձանագրած ենք այս տարիներու ընթացքին, բայց նույնքան



ԱՂՈԹՔ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ

անկեղծությամբ կուգենք այստեղ հայտնել, որ այս բոլորը մենք կարողացանք իրագործել ամեն բան առաջ շնորհիվ Աստուծո օգնականության:

Տկար են Մեր խոսքերը, բայց հավատացեք, թե մանավանդ Մեր պաշտոնավարության առաջին շրջանին, երբ այդքան բարդ և դժվար լուծելիք հարցերու առջև կգտնվեինք և գրեթե հուսահատության եզրին մոտեցած, ահա այդ օրերուն կզգայինք երրեմն նույնիսկ նյութական հպումը ինչ որ աներևույթը ուժի մը Մեր էության, որ Մեզ կներշնչեր անքան կորով և այնքան ուժ և այնքան քաջություն: Եվ կարծ ժամանակվա ընթացքին կարծեք բոլոր ամպերը կամաց-կամաց փարատեցան: Լուս ծագեցավ Մեր շուրջ և կարողացանք տեսնել աշխատանքի ուղիղ ճանապարհ մը, ծառայելով Աստուծո, մեր ս. Էջմիածնին, մեր հավատավոր ժողովուրդին:

Պարտինք ավելացնել նաև, թե Մեր գործունեության ընթացքին Մենք ունեցանք և վայելեցինք հոյս բարյացակամ վերաբերմունքը, օգնականությունը մեր հարազատ հայրենիքի պետական իշխանության: Հանուն Հայաստանաց եկեղեցվո, հանուն մեր ժողովուրդի, Մենք շնորհակալություն կհայտնենք մեր բարձր կառավարության և կմաղթենք որ այս գոյավիճակը հետզհետեւ առավել ամրապնդվի, առավել խորանա և ընդարձակվի և մենք իբրև եկեղեցի, շարունակենք մեր առաքելությունը և այստեղ ի Հայաստան և ի սփյուռն աշխարհի: Այս գիտակցությամբ, Մեր հոգեւոր առաքելության ճանապարհին վրա, Մենք կկամենանք նաև Մեր խղճի պարտքը կատարել դեպի մեր վերածնած Մայր Հայաստանը:

Ամեն անգամ, երբ արտասահման կգտնվինք, կզգանք հատուկ կերպով, թե մեր հավատացյալ ժողովուրդը, որ Մեզ կիմավորե ձեզի ծանոթ խանդավառությամբ և հուզումի ալեկոծումներով, ճիշտ է Մեր անձին մեջ նաև կտեսնեն Ամենայն Հայոց Հայրապետը, ս. Էջմիածնը, բայց այդ ժողովուրդի հոգին և ապրումներուն մեջ դժվար չէ կարդալ անսահման սիրո և հավատարմության, գգացումները դեպի հայրենի աշխարհը: Այլավես դժվար և սխալ պիտի ըլլար մեկնաբանել արտասահմանի հայության հոգեկան ճշմարիտ գոյավիճակը: Մենք առաջին սպասավորը մեր եկեղեցվո անհունապես գգացված ենք որ Մեր անձով, մեր ժողովուրդը կկապի ոչ միայն ս. Էջմիածնին, այլև այսօր վերածնած ու վերաշինած ամենայն հայոց Մայր Հայաստանին:

Մեր գործունեության ճանապարհի վրա անկասկած իրենց վճռական նպաստը բերին և կշարունակեն բերել նաև բոլոր մեր գործակիցները, թե այստեղ Մայր Աթոռի և թե՝ արտասահմանի մեջ մեր երկու Պատրիարք եղբայրները՝ Երուսաղեմի և Կ. Պոլսո, մեր թեմակալ առաջնորդները, մեր բոլոր հոգեւոր հովիվները, մեր թեմական ու համայնքային կազմակերպությանց մեջ դեկավար դեր կատարող աշխարհական պատվական ազգայինները: Բոլորը-բոլորը, իրենց լուման, իրենց մասնակցությունը բերած են շարունակարար, որպեսզի Հայոց Հայրապետի գործունեությունը կարողանա հառաջընթաց շինարար ճանապարհով ընթանալ:

Մենք այս առիթով բոլորին կհայտնենք Մեր անկեղծ գոհունակությունը: Երբեմն Մեր եկեղեցական կյանքին մեջ, արտասահման մանավանդ, կպատահին դեպքեր, որոնք կուգան մեզ տիսրեցնելու, երբեմն նույնիսկ երևույթներ, որոնք արտաքնապես դիտված կարծեք թե որոշ նշաններ են մեր եկեղեցվո տիկարության, բայց Մենք համոզված ենք, որ այդ բոլոր երևույթները մակերեսային են ու անցողական: Իրականության մեջ, մեր ամրող հոգեւորականությունը առանց բացառության և մեր հավատացյալ ժողովուրդը իր աշխարհական ներկայացուցիչներով, հիմնական իրենց գգացումներով և զի-

տակցությամբ կաշխատեն մեկ ուղղությամբ: Այն է՝ չեն ու պայծառ, կենդանի, անսասան պահել մեր և եկեղեցին և մեր Մայր Աթոռ և մեր Աջմիածինը:

Մենք չենք կրնար մոռնալ այն բոլոր ազնիվ հայ հոգիները, որոնք Մայր Աթոռին բարերարները հանդիսացան այս վերջին 14 տարիներուն ընթացքին, Երկար է ցանկը այդ անոններուն, ավելի քան չորս տասնյակներու կհասնի թիվը այս պատվական հայերուն, որոնք սրտաբուխ կերպով այնքան առատաձեռն եղան դեպի և Էջմիածին և որով հնարավոր եղավ կենսագործել մեր շինարարական ծրագիրները: Մայր Աթոռը և մեր ներքին թեմերը իրենց եկամուտներով այսօր ի վիճակի են հավասարակշռելու իր բյուջեները: Այս իրողությունը Մեր գործունեության կարևոր հաջողություններն են մեկը Կմկատենք: Վերջին 14 տարիներու ընթացքին եկեղեցական ներքին եկամուտները Հայաստանի մեջ մանավանդ ավելի քան քառապատկվեցան և այսօր կըրնանք հայտարարել, թե մեր ներքին բոլոր տեսակի կարիքներուն համար Մայր Աթոռը ինքնարավ է ամբողջապես: Միայն հոգնոր ճեմարանը և բացառիկ շինարարական ծրագիրները, ինչպես վերանորոգումը մեր հնադարյան տաճարներու կամ կառուցումը նոր շենքերու, որոնք կկարուտին արտասահմանի մեր բարերարներու օժանդակությանը:

Մենք վստահ ենք, թե այն խանդավառ մթնոլորտը, որ ստեղծված է արտասահմանի հայության մեջ, հյութապես և Էջմիածինի օգնելու, անշուշտ որ պիտի շարունակվի և հետզհետեւ պիտի ամի: Երբեմն այնպիսի հոգիչ դրվագներու առջև կգտնվինք այդ տեսակետեն, որ նույնիսկ մեզի կթվի անհավատիք:

Մայր Աթոռին բարերարները խկական հայեր են, հոգիով կապված այս մայր հողին և այս սուրբ տեղին: Անոնցմով կապրին և կհավատան, անոնցմով հավերժացնել իրենց բարի հիշատակը: Այս երկրի, հայ հայրենիքի, և Էջմիածինի հավիտենականության մեջ կտեսնենք իրենց ալ հավերժությունը: Կաղողենք, որ այս ոգին երեք չտկարան և հետզհետեւ ավելի պայծառան և համայն հայությունը ի Հայաստան և ի սփյուռք աշխարհի ըլլան մեկ սիրտ և հոգի, մեր սուրբ հավատքով, մեր սուրբ եկեղեցիով և անոր գերազույն գույնը հանդիսացող՝ հավիտենական Մայր Աթոռ և մեր Էջմիածինով:

Մեր գոհունակության և շնորհակալության խորագգաց գցացումները ձեզի բոլորիդ կրկին հայտնելով, կվերջացնենք Մեր խոսքը նոյն մաղթանքով՝

«Տէ՛ր, եթէ զշրտուն իմ բանաս, բերան իմ երգեսէ զօրհնութիւնս քո». ամեն:

Ավարտվում է հայրապետական հորելյանական հանդիսության առաջին մասը:

Հնդմիջման ժամանակ բոլոր հանդիսականները հյուրափրկում են մըրգասեղանների շորջ, Մայր Աթոռի բարիքներով՝ խաղողով և դեղձով:

Այնուհետև Վեհական Հայրապետի բարձր նախագահության ներքո սկսվում է օրվա հանդիսության գեղարվետառական մասը, որին իրենց շնորհալի մասնակցությունն են թերում Երևանի մեր անվանի արվեստագետներն ու երաժշտական խմբերը:

Սուաշինը հանդես է գալիս Մայր տաճարի երգեցիկ խումբը, գեղարվեստական դեկավար՝ Խորեն Մելիսանեցյան: Երգչախոսմբը կատարում է Ալ. Հարությունյանի «Հայրապետական մաղթանքը», Զայլովսկու «Տէ՛ր, ողորմյան», Կոմիտաս Վարդապետի «Կայի երգը» և «Ով զարմանալի», «Այսօր նայն հայրական», «Հայրապետական մաղթերգ», «Օրինեցեք, գովեցեք» հոգևոր երգերը:

Ապա իր մենահամերգով հանդես է գալիս Մայր տաճարի երգեցիկ խմբի մենակատար և Հայաստանի հանրապետության վաստակավոր երգչուիի Լուսիններ Զաքարյանը, որին դամբիճը ողջունում է սրտագին ծափերով: Սիրված երգչուիին կատարում է՝ Թախմանինով՝ «Տեր, ողորմյա», Կոմիտաս վարդապետ՝ «Կոռունկ», Բախո-Գունը՝ «Ավել Մարիա», դաշնամուրի վրա նվագակցում և Զովիետա Սվաստանը:

Դամբիճը նոյնական ոգևորությամբ ողջունում է նաև ՍՍՀՄ ժողովրդական երգչուիի Գոհար Գասպարյանին: Նա կատարում է՝ Շահան Բերբերյան՝ «Լուսավորչի կանչեղը», Գլինկա՝ Լուդմիլայի կավատինան «Ռուսան և Լուդմիլա» օպերայից, Բիզե՝ «Գառն Աստուծո» («Ագնոս Դեի»), Փոռի թեմա և վարիացիաներ:

Հանդիսության վերջում հանդես է գալիս Հայաստանի պատանի ջութակահարների համույթը, գեղարվեստական ղեկավար՝ Գևորգ Աճեմյան: Տաղանդավոր ու երիտասարդ այս համույթը կատարում է՝ «Սուրբ-սուրբ», Կոմիտաս վարդապետ՝ «Կաքավիկ», Ա. Խաչատրյան՝ «Անտանինո» և «Սոսերով պար», Բրամս՝ «Հունգարական պար», Զայկովսկի՝ «Օրորոցային», Դինիկու՝ «Ռուսինական պար», Դվիրժակ՝ «Սլավոնական պար»:

Գիշերվա ժամը 11.30 ավարտվում է Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակին և գահակալության 14-ամյակին նվիրված հորելլանական հանդիսությունը՝ խանդավառ և սրտագին մթնոլորտում:

*
* *

Հոկտեմբերի 8-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9-ին, քույր եկեղեցիների և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատվիրակները հրաժաշտ են առնում Հայոց Հայրապետից՝ սրտագին երախտագիտություն, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետին՝ եղբայրական ջերմ հյուրասիրության և այն հոգևոր ուրախության համար, որը վայելեցին՝ ներկա լինելով ս. Էջմիածնի մեջ սրբալուս մեռնի օրհնության, հայրապետական հորելլանական հանդիսություններին և այցելելով պատմական վանքերն ու սրբավայրերը, Հայաստանի տեսարժան վայրերը:

Չերմ, անկեղծ ու սրտառու էր վերջին ողջագուրումը, ի համբույր սըրբության և սիրո, Հայոց Հայրապետի և քույր եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչների միջև:

ԵՐԳՉԱԽՆՄԲԱՑԻՆ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԵՐԳ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, քոլոր հոգևորական ու աշխարհական պատգամավորներն ու հյուրերը ուխտագնացություն են կատարում դեպի Գառնի ու ս. Գեղարդ:

Երեկոյան ժամը 18-ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, ի պատիվ պատգամավորների և հյուրերի, կազմակերպում է հոգևոր համերգ:

Եղոյթ է ունենում Երևանի երգչախմբային ընկերության արական երգչախումբը, գեղարվեստական ղեկավար՝ արվեստի վաստակավոր գործիչ Էմմա Մատուրյան:

Համերգից առաջ հանրածանոյթ երաժշտագէտ պրոֆ. Ռ. Աթայանը հանդիսական է գալիս «Միջնադարյան հայ վարպետութիւնի երգերը» թեմայի շուրջ հետաքրքիր ու բովանդակալից դասախոսությամբ:

Սլեպուհետու երգչախոմքը փայլուն հաջողությամբ կատարում է կոմիտազան ձայնագրությամբ և Ռ. Աթայանի ներդաշնակումով հատընտիր հասուածներ ու Սերոյան Մաշտոցի ապահովարության շարականներից, այլ տաղերից, գանձերից և հատվածներ ու պատարագից:

Մեներգները խորը ապրումով և հոգականությամբ կատարում է երգչութիւնի լուսին Զաքարյանը:

Երգչախմբային հոգևոր համերգը ավարտվում է ժամը 21-ին՝ արժանանալով համդիսականների շերմ գնահատության ու Հայոց Հայրապետի օրինակությանը:

Հոկտեմբերի 9-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, պատգամավորների և հյուրերի համար կազմակերպվում է գրոսապտույտ դեպի Սևան և ուստագնացություն՝ Սևանի վաճքերը, որին մասնակցում են շուրջ 200 հոգի:

Գրոսապտույտը գլխավորում է ամեն. տ. Շնորհիք պատրիարքը:

Պատգամավորներն ու հյուրերը այցելում են Առաքելոց վանքը ու եկեղեցին, ապա լճի վրա շոգեմակալուներով կատարում են հաճելի գրոսապտույտ:

Ժամը 14-ին լճի ափին, «Աղթամար» ճաշարանում, ի պատիվ հյուրերի, տրվում է մեծ ճաշկերույթ՝ նախագահությամբ տ. Շնորհիք պատրիարքի:

Ճաշկերույթի ժամանակ ներկաներից շատերը հայրենապետական խանության ճառերով էլ ավելի ջերմացնում են սեղանների շուրջ ստեղծված հայկան մթնոլորտը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՈՒՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՄՈՏ

Հոկտեմբերի 10-ին, ուրբաթ օրը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, բոլոր պատգամավորներն ու հյուրերը այցելում են Միծունակարերո՛ Հայ նահատակաց հուշարձանը, որ կատարվում է հոգեհանգստյան արարողություն:

Հայոց Հայրապետը, հանուն հայ եկեղեցու և ժողովրդի, մեծ ծաղկապսակ է զետեղում նահատակաց հուշարձանի վրա:

Ապա, ժամը 12-ին, Երևանում, Կառավարական տանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բաղդալ Մուրադյանը ընդունում է Ամենայն Հայոց Հայրապետին, տ. Եղիշե և տ. Շնորհիք պատրիարքներին, արքայիսկրպուներին, եպիսկոպոսներին, պատգամավորներին և հյուրերին:

Վեհափառ Հայրապետը և բոլոր պատգամավորները տեղեր են գրավում ընդունելության շքեղ դահլիճում:

Ներս է մտնում Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բաղդալ Մուրադյանը և ընդունվում շերմ ծափերով:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ողջունելով հայոց հարգարժան վարչապետին, շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում հայրենի բարեխնամ կառավարությանը՝ Էջմիածնում եպիսկոպոսական ժողովի գումարման, սրբալոյս մեռոնի օրինության և այլ հանդիսությունների առթիվ Հայաստանի կառավարության ընձեռած դյուրությունների և ուշադրության համար:



Վեհափառ Հայութեալ, Երուսաղեմի և Կ. Պոլի պատրիարքները՝ Նահատակաց
Բուշարձանի առջև

Այսուհետև Հայոց Հայրապետը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետաի նախագահին է ներկայացնում Երուսաղեմի հայոց տ. Եղիշե և Թորթիայի հայոց տ. Շնորհք պատրիարքներին, թեմակալ առաջնորդներին, եպիսկոպոսներին, պատգամավորներին և նշում, որ բոլորի պրտերը լոված չեն անսահման սիրով և երախտագիտությամբ դեպի մեր վերածնված նայր հայրենիքը, դեպի նրան բարեխնամ նարազաւ կառավարությունը:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանը ջերմորեն ողջունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքներին, բոլոր հոգևորական և աշխարհական բարձրաստիճան պատգամավորներին:

Տեղի է ունենում ջերմ, հայրենասիրական գրույց՝ սրտագին մթնոլորտում:

Հանուն ներկաների խոսք են ասում նաև տ. Սերովը արքեպ. Մանուկյանը, Սեղրակ Քարյանը (Ֆրանսիա), Տիգրան Բոյաջյանը (ԱՄՆ), Արտոն Պելքտանյանը (Եգիպտոս), որոնք հիացմունքով և ազգային հպարտության գդացմունքներով նշում են մայր հայրենիքի ձեռք բերած նվաճումները, գիտության, արվեստի, մշակույթի և տնտեսության բնագավառներում, հայրենի կառավարության և հայ ժողովրդի հայրենաշեն աշխատանքները և ս. Հջմիածնի և Ամենայն Հայոց հայրենասեր Հայրապետի հանդեպ ցոյց սրբած մեծ հարգանքը ու վստահությունը, բարոյական օժանդակությունը՝ Նրա հայրենասիրական և խաղաղասիրական մեծ գործունեության ճանապարհին:

Այսուհետև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանը պատմում է այն հերոսական, հայրենանվագր աշխատանքների մասին, որոնցով խեղճ ու աղքատ Հայաստանը դարձել է ծաղկուն հանրապետություն, խաղաղության և աշխատանքի պայմաններում, եղբայրական ժողովրդների համերաշխ ընտանիքում:

Իր ողջունի խոսքում ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահը շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին, բոլոր ելույթ ունեցողներին՝ հայրենի կառավարության և հայ ժողովրդի հասցեին ասված սրտարուի խոսքը և բարեմաղթությունների համար:

Հայոց Հայրապետը, սրբազն պատրիարքները և բոլոր ներկաները հրաժեշտ են առնում Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանից անմոռանալի տպավորություններով և հուշերով:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի ընդունելությանը ներկա եր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 10-ին, ուրբաթ օրը, ժամը 14-ին, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի, Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակի առիթով, կազմակերպում է ընդունելություն «Արմենիա» նաշարանում, որին հրավիրվում են նաև տ. Եղիշե և տ. Շնորհք պատրիարքները, թեմակալ առաջնորդներն ու եպիսկոպոսները, հյուրեր և այլ պաշտոնական անձինք, որոնց թվում նույնության առաջնային պատճեն է առնելի 100 հոգի:

Պատվո սեղանի շուրջ տեղեր են գրավել Վեհափառ Հայրապետը, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, տ. Եղիշե և տ. Շնորհք պատրիարքները, Սիյուռքահա-

յոթյան հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը. ՀՍՍՀ Մինիստրների սովետին առջնութեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի նախագահ Ս. Գասպարյանը, ՍՍՀՄ Մինիստրների սովետին առջնութեր կրոնական գործերի խորհրդի անդամ Ե. Տարասովը, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առջնութեր Հայաստանի նեռագրական գործակալության ղիբելնոր Ս. Խաչիկյանը:

Ընդունելությունը ղեկավարում է ՀՍՍՀ Մինիստրների սովետին առջնութեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, որը և առաջին քաժակը առաջարկում է խմել Վեհափառ Հայրապետի կենաց՝ Նրա ուժը նեանափառական-խալաղամիրական գործունեության հաջողության համար:

Հայոց Հայրապետը բաժակ է առաջարկում հայրենիքի բարօրության և, ի դեմս Կ. Դալլաքյանի, հայրենիք բարեխնամ կառավարության անդամների աշխարհաշեն գործերի հաջողության և նրանց արևատության կենաց:

Այսուհետև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առջնութեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, ի դեմս տ. Եղիշե և տ. Շնորհը պատրիարքների, բաժակ է առաջարկում հայ բարձրաստիճան հոգևոր կանության կենաց:

Մեղանների շորջ ստեղծվում է հայկական ջերմ ու սրտագին մթնոլորտ:

Ընդունելության ժամանակ հայրենափառական խանդավառ եղույթներով հանդես են գալիս պրոֆ. Բարուեակ Թովմասյանը (Լիքանան), Հովհաննես Քերիայանը (Եգիպտոս), տաղանդավոր բանաստեղծության Սիլվա Կապուտիկյանը, Ավետիս Դեմիրճյանը (Լիքանան) և ուրիշներ:

ՄԵԿՆՈՒՄ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Հոկտեմբերի 11-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 17-ին, Երուսաղեմի հայոց ամեն. տ. Եղիշե սրբազն պատրիարքը հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից՝ ընկերակցությամբ ո. Աթոռի լուսարարապետ տ. Հայրիկ արքեպ. Ապահնակի, ժառանգավորաց վարժարանի և ընծալարանի տեսուց տ. Շահն եպս. Ամեմյանի, և Լեռնագրադի վրայով վերադառնում իր Աթոռության վեհապետմ:

Երևանի օդանավակայանում Երուսաղեմի հայոց պատրիարքին ճանապարհում են, հանուն Վեհափառ Հայրապետի, տ. Հայկազուն արքեպ. Աքրուհամյանը, Մայր Աթոռի միաբանությունը և ընդունելության հանձնաժողովի անդամները:

*
* *

Հոկտեմբերի 11-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, պատգամավորներն ու հյուրերը այցելում են Երևանի պանթեոն՝ անմահ Կոմիտաս վարդապետի շիրմին, և մեծ ծաղկեպսակ զետեղում նրա արձանի առաջ:

Տեղի է ունենում հոգեհանգստյան պաշտոն՝ մեծ վարդապետի հիշատակին նվիրված:

Ժամը 12-ին պատգամավորների և հյուրերի մեծ խումբը այցելում է Մարդարարադի հերոսամարտի հուշարձան:

Երեկոյան ժամը 18-ին Մայր տաճարում Վեհափառ Հայրապետը նախագահում է Կիրակամի ժամերգությանը:

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ
ՄՍՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**

Հոկտեմբերի 12-ին, Կիրավի.—Մայր տաճարում հայրապետական համայստությունը և պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը՝ Թարգմանչաց և հայ մշակույթի տոների առիթով:

Եկեղեցական թափորը առաջնորդում է Վեհափառ Հայրապետին դեպի Մայր տաճար:

Հայրապետական և պատարագին ներկա են բոլոր պատգամավորներն ու հյուրերը:

Ս. պատարագին իրենց երգեցողությամբ մասնակցեցին տաղանդավոր երգչուիներ Գոհար Գասպարյանը և Լուսինե Զաքարյանը:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը խոսում է հետևյալ բովանդակալից և ոգեշունչ քարոզը.

ՎԵՀԱՓԱՍՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

(12 հոկտեմբերի 1969 թ.)

«Հանուն Հօր և Որդոյ և Հոգույն Սրբոյ, ամէն»:

«Եջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա»:

Իշավ Միածինը իր Հորմեն ուղարկված և Անոր հետ միասին իշավ նաև լուսին փառը:

Սիրելի հավատացյալ ժողովորդ, Դ դարու արշալուսին գրեթե առաջին արևի ծագումի հետ մեկտեղ, հայոց աշխարհին մեջ, Արարատյան դաշտի վրա, ճիշտ այն տեղը ուր կանգնած ենք մենք պատուի, տեղի ունեցավ հրաշալի տեսիլք մը: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տեսիլքը ունեցավ մեր Տիրոջ և Փրկչի իշման, լուսեղեն կերպարանքին մեջ ցուց տալով այն տեղը ուր պետք է կառուցվեր հայոց քրիստոնեական նոր հավատքի առաջին աղոթքի տունը, սուսացին նկեղեցին: Եվ ինչպես գիտեք, ան կառուցվեցավ ո. Գրիգոր Լուսավորիչի անոր թե-թիկունք դարձած հայոց Տրդատ թագավորի շանքերով և աշխատանքով:

Ժարականագիրը կավելացնե նշանավոր գաղափար մը թէ՝ Հյուսուկ հայոց աշխարհին վրա իշավ նաև լուսին փառը: Իրոք, քրիստոնեությամբ, նոր հավատքի գորությամբ, շունչով և շնորհներով, ալսինքն Քրիստոսի լոյսով, կերպարանափոխվեցավ, լուսավորվեցավ և բյուրեղացավ հայ ազգի հոգին, իմացականությունը, կամեցողությունը, և ստեղծագործական հանձնարքը: Ամբողջ Դ դարու ընթացքին մինչև Ե դարու սեմին շարունակվեցավ այս խմբումը, մշակումը, հայ հոգիի բյուրեղացումը:

Սեպի համար, վստահ եղեք, ոժվար է պատկերացնել այդ հարյուր վճռական տարիները: Ճիշտ է մեր մատենագիրները վկայություններ կհաղորդեն մեզի, բայց հազիվ թե մենք կարողանանք ամբողջական պատկեր ունենալ հայոց փոթորկված հոգիի այդ հարյուր տարիներուն երբ հայ ժողովորդը ինքզինքը գտավ, իր իսկական նոգեկան ուժերը հայտնաբերեց քրիստոնեական լուսի ներքև և այդ լուսով շաղախնեց և բյուրեղացուց իր թե՝ իմացանությունը, թէ՝ զգացումները և թէ՝ կամեցողությունը: Կրնանք ըսել առանց վարանելու թե այդ հարյուր տարիները հայ ժողովորդի վերածննդյան ճշշմարիտ դարաշրջան մը հանդիսացան: Ե դարու մենք կհասկնանք թե ինչու

շարականագիրը կըսէ յե Քրիստոսի էջով և քրիստոնեության մուտքով ի Հայաստան աշխարհ, իջավ նաև լուսին փառքը: Սուրբ Թարգմանիչներու մեծ գործը որիշ բան չէ, եթե ոչ սքանչելի արտահայտություններեն մեկը և զղուավորը այդ լուսի փառքին:

Երեկ և այսօր մեր սուրբ եկեղեցին և մեր ազգը ամբողջ կտոնախմբեն հիշատակը սուրբ Թարգմանիչներու՝ ս. Սահմակի, ս. Մեսրոպի և անոնց բոլոր աշակերտներուն, որոնք կազմեն այն սքանչելի փաղանգը, իմացական և ոգեկան ուժերու, որոնք մեր պատմությանը պարգևեցին ոսկեդարը: Այդ ժամանակաշրջանին է որ ոգեղինացած, հայ ժողովուրդը, իր մեծագոյն հանճարներն մեկուն միջցոցավ ստեղծեց գիր-գրականություն, դպրություն: Սկիզբը դրվեցավ հայոց մատենագրության:

Այդ դարաշրջանին է երբ վերջնականացես իր անմահ ձևերը գտավ հայ ճարտարապետությունը: Այս դարաշրջանն սկիզբ առին հայկական քանդակագործությունը, նկարչությունը, կրոնական երաժշտությունը և բոլոր արվեստները:

Այս դարաշրջանին է նաև, որ կարծեք ի լրումն այս բոլոր պայծառակերպումներուն, հայ ժողովուրդի մեջ վերջնականացես դարբնվեցավ ազգային հայրենասիրական ոգին, սեփական հայրենիքի և ազատության գաղափարը, հայոց պատմության ճշմարիտ ոգին, որ իր մարմնավորումը ստացավ Ավարայրին դաշտի վրա, սուրբ Վարդանի և իր քաջ գինակիցներու պատերազմով: Պատերազմը որ թեն, մակերեսային կերպով դիտված, վերջացավ հայոց պարտությամբ, բայց իրականության մեջ Վարդանանց պատերազմը շահված պատերազմ մը եղավ, գոյն ամենաշահված պատերազմը, ամենամեծ հայրանակը ամբողջ հայոց պատմության մեջ: Վարդանանց պատերազմը այդպիսի պատերազմ մը եղավ և մեաց իբրև հիշատակ մինչև մեր օրերը, իբրև նոգեկան, բարոյական և ազգային բացարձակ հաղթանակ: Ծիշտ է ըսկած թե Արդանակը Ավարայր երթալե առաջ պատերազմը շահած էին արդեն:

Ժողովուրդներու կյանքին մեջ քիչ ամգամ կապատահին այդպիսի դարաշրջաններ ինչպես մեր ոսկեդարը և հաճախ չեն կրկնվիր: Հեղենները ունեցան նման դարաշրջան մը, Քրիստոս հինգ հարյուր տարի առաջ: Ֆրանսացինները իրենց ոսկեդարը ունեցան Լյուդովիկոս Ֆ' թագավորի շրջանին, անգլիացինները՝ Ելիզավետա թագուհիի շրջանին: Բայց այդ դարաշրջաններն չկըրկընվեցան: Ժողովուրդները կարծեք իրենք ալ կհպատակին կյանքի օրենքին ընդհանրապես, կծնին, կաճին և ծաղկումի շրջան մը կոնենան, հետո կուզան հոգեածության և ծերության շրջաններ:

Բայց ժողովուրդներ կան այս աշխարհի վրա, որոնք այդ հաջորդող շրջանները կհաղթահարեն և կկարողանան նոր վարժնությունով հանդես գալ պատմության բեմին վրա: Մենք կրնանք հապարտ ըլլալ, որ արևի ներքն այդպիսի ժողովուրդի մը զավակները կհանդիսանենք և հակառակ արտաքին, շատ ճանք աննպաստ պայմաններուն: Ինչպես պատմաբանները կվկայեն, համաշխարհային պատմության առեղծվածներեն մեկը կհանդիսանա հայ ազգի վերապրումը և վերածնունդը: Մեր ժողովուրդը Ե դարեն հետո ունեցավ հաճախ փառքի շրջաններ, ինչպես կիլիկյան շրջանը, որ մենք կկոչենք արծաթե դար: Հետո վերածննդի շրջան մը ապրեցավ մեր ազգը անցյալ դարու վերջերուն մինչև մեր դարու սկիզբները: Սակայն 1915-ին ահավոր հարված մը կրկին ստացավ մեր ազգը, Մեծ եղենով երբ Քրիստոնյաներ նահատակվեցան և քիչ էր մեացած, որպեսզի նաև արևելահայությունը նույն ճակատագրին ենթարկ-

վեր: Նորեն հրաշքի համազոր պայմաններուն տակ վերածնավ մեր ազգը, իր նոր հայրենիքը ստեղծեց և ողբի ու որբի, քար ու քանդ եղած այս փոքրիկ Հայաստանը վերջին տասնամյակներուն դարձավ իսկապես ամբողջ հայության կյանքը հույսի և հապատության լույս կեղունը:

Եվ այսօր կխորհինք թէ արդար կըլլա խոստովանիլ, հաստատել, թէ նոր վերածննի շրջան մը կապրի հայ ժողովուրդը մայր հայրենիքի մեջ, իր հայկական պետականության հովանիին ներք:

Հայ ժողովուրդի նոր վերածնունդը, նոր ոսկեղարը, իր եռուն զարգացման ընթացքին մեջ կգտնվի, իր ապահով և փառավոր ընթացքին մեջ: Մենք այսօրվաններս գուցե տակավին լրիվ գիտակցությունը չունենանք մեր ներկա վերածնունդին, ժամանակի տարածություն մը պետք է, ավելի ճիշտ, ավելի ուղիղ և ավելի առարակայորեն գնահատելու համար մեր այս օրը:

Դուք բոլորդ, մանավանդ դուք, պանդուստ զավակներ Մեր, որ նեռու աշխարհներն եկած եք պատեղ, զիտեք և ձեր աշքով կտեսնեք և ձեր ձեռքերով կշոշափեք այն կենդանությունը, որ կհորդի մեր մայր հողեն այսօր մեր Հայաստանի հանրապետության երկնքի տակ: Կտեսնեք և անշուշտ կզմահատեք այն, ինչ որ կատարված է իբրև նյութական կառուցում, իբրև քաղաքաշինություն, իբրև տնտեսություն և ճարտարարվեստ: Եվ դուք ձեր հայացք կուղեք մանավանդ դեպի հոգեստ, իմացական արժեքները մեր արդի Հայաստանի, որոնք իսկապես հիշատակության արժանի պիտի մնան եկող բոլոր ժամանակներուն համար: Կյանքի և ստեղծագործության բոլոր ասպարեզներուն մեջ հառաջ կընթանա մեր մայր հայրենիքի հաղթական երթը: Եվ պիտի շարունակվի այդ երթը, և մենք կհավատանք թէ քայլ առ քայլ, աշխարհի խաղաղության պայմաններու մեջ և ավելի արդար աշխարհի մը դատաստանով, մեր անցյալի մեջ չարչարված և պայօք վերածնաված հայ ժողովուրդը պիտի հասնի իր բոլոր արդար, ազնիվ իշճերու իրականացման: Առաջ Աստված:

Մենք այսօրվա հայերս այս գիտակցությամբ ամուր պետք է կանգնինք մեր հայկական զգացումներուն, մեր քրիստոնեական հավատքի և մեր ազգին ոգիի պատվանդանին վրա: Մանավանդ դուք, նեռուներն եկադ հավատացյալ զավակներ Մեր, որոնք կգտնվիք հաճախ աննպաստ պայմաններու մեջ ձեր հայկականությունը պահպանելու համար: Այս սուրբ բեմն Մենք կոչ կընենք բոլորին, որպեսզի չտկարանաք, չշփորչիք, չհուսահատիք: Միշտ հիշեցեք մեր մոտ երեք հազար տարվա պատմությունը, հիշեցեք մեր նախնիներու անասելի տառապանքները և փորձությունները, քաջությամբ խոստվանեցեք ձեր քրիստոնեական հավատքը, ձեր հայկականությունը, ձեր հայրենարադ զգացումները:

Մենք կաղոթենք առ Աստված, որպեսզի Տերը միշտ հովանի մնա մեզ բոլորիս վրա, պահե-պահպանէ հայոց եկեղեցին և ազգը համայն մեկ և անբաժան, և մեր ամենուս սրտեն բխած եկեղեցանվեր և հայրենաշեն ծրագիրները հաջողությամբ պատկե:

Աղոթենք առ Աստված, որ այն լույսը, այն փառքի լույսը, որ իշավ և ծագեցավ Հայաստան աշխարհի վրա Դ դարու սկիզբին և որ այնքան պայծառակերպեց մեր ժողովուրդը Ե դարու ընթացքին, այդ փառքի լույսը մեզի հետ մնա այսօր և հավիտյան: Ամեն:

Միրելի հավատացյալներ, այս պահուն մենք հոգեստ պարտականություն մը ունենք կատարելու: Քահանայք և ժողովուրդ, միասին պիտի աղոթենք հանգուցյալ հանճարեն Կոմիտաս վարդապետի հոգիին համար, անոր ծնընդ-

յան 100-ամյակի առիթով։ Կոմիտաս Վարդապետ ինքն ալ մինակը, սյուն մը կհանդիսանա մեր մշակույթի պատմության մեջ, իբրև մեր ազգի լուսի փառքերեն մեկը։ Թող հավետ անմոռաց մնա իր հիշատակը, միշտ խնկելի թե երկնքի մեջ, թե՛ այստեղ հայոց աշխարհի մեջ։ Թող անոր երաժշտական հանճարը միշտ առաջնորդող ոգի մնա մեր բոլոր երաժիշտներուն այսօր և վաղը և հավիտյան։

Արդ, կիրավիրենք զձեզ բոլորդ որ խոնարհած սրտերով և խորունկ հարգանքով և երախտագիտությամբ աղոյեք մեծ Վարդապետի, մեծ արվեստագետի հոգովն խաղաղության և լուսավորության համար։ ամեն։

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի համեմադրությանը, կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ Կոմիտաս Վարդապետի ծննդյան 100-ամյակի։

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՐԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Կիրակի, հոկտեմբերի 12-ին, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանի համեմադրությանց դահլիճում, Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, մեծ հանդիսավորությամբ նշվեց Մայր Աթոռում սրբազն ավանդույթ դարձած հայ մշակույթի տոնը։

Համեմադրությանը ներկա էին Կ. Պոլիի պատրիարք տ. Շնորհիք արքեպ. Գալստյանը, թեմերի հոգևորական և աշխարհական այն բոլոր հրավիրված ներկայացուցիչները, որոնք ժամանել էին ս. Հջմիածին՝ մասնակցելու մետաքինության և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան ՅՈ-ամյակի տոնակատարություններին։ Համեմադրությանը ներկա էին նաև Գերագոյն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, հայ մշակույթի բազմավայսակ գիտնականներ, մտավորականներ, արվեստի ու մշակույթի գործիչներ և բազմաթիվ հրավիրյալներ։

Ներկա էր նաև ՀՍՍՀ Մինհատրների ստվետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Համեմադրությանը ներածական խոսքով բացում է Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդ գեր. տ. Թորգոն արքեպ. Մանուկյանը։ Արքազանը պատմական մի հետադարձ հայացքով անցնում է հայ մշակույթի փառքի դարավոր ճանապարհով և նշում, որ հայ ժողովրդի կազմավորման այգաբացն իսկ սկսվում է ազատությամբ և լուսավորությամբ։ Ապա վեր է հանում ս. Մաշտոցի, ս. Սահակի և մյուս թարգմանիչ Վարդապետների մեծ ու անմահ գործը, որով հիմք դրվեց հայ մշակույթին։

Այսուհետև սրբազն հայրը խոսում է հետագա դարերի հայ մշակույթի զարգացման փառավոր էջերի մասին և շեշտում, որ չնայած հայ ազգի պատմական ուղին տառապալից է եղել, չափազանց դառը, այնուամենայնիւ նա ժամանակ է գտել ստեղծագործելու, կառուցելու և զարգացնելու իր մշակույթը։

Ապա սրբազնը խոսքը տալիս է համեմադրության գլխավոր բանախոսին՝ Մերու Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի ավագ գիտական աշխատող և բանափրական գիտությունների ղոկտոր Ասատոր Մնացականյանին, որը հանդես է գալիս նետկյալ բովանդակալից գեկուցումով։

«Վեհափառ Հայրապետ, գերաշնորհ և հոգեշնորհ նայրեր, հարգելի կա-